

Գեղամ Մ. Բաղայան

## ՏԱՅՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ XVI դ. ՎԵՐՋԻՆ

Ըստ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակի»\*

**Բանալի բառեր** – Տայք, Գյուրջիստանի վիլայեթ, Սերգի Ջիքիա, Բանակի նահիե, Քյամխիսի նահիե, Փանասկերտի լիվա, տեղանուններ, անձնանուններ, բնիկ հայեցի նկարագիր, քաղկեդոնականություն, մահմեդականություն:

### Ընդհանուր տեղեկություններ

Ուշմիջնադարյան Տայքի պատմական ժողովրդագրության ուսումնասիրության համար բացառիկ կարևորություն ունի XVI դ. 2-րդ կեսին ստեղծված այն եզակի օսմանյան փաստաթուղթը, որը հայտնի է «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակ» («Devter-i mufassal-i vilâyet-i Gürcüstan»), այսուհետև՝ «Հարկացուցակ») անունով: Այն ժամանակին պահվում էր Վրաստանի ազգային թանգարանի արևելյան ձեռագրերի բաժանմունքում, իսկ ներկայումս՝ Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում (Ձեռագրերի ինստիտուտ): Նշանավոր արևելագետ, օսմանագետ Սերգի Ջիքիան 1941 թ. և 1947 թ. նախ՝ հրատարակել է այս սկզբնաղբյուրի վրացերեն թարգմանությունը, ապա՝ արդեն բուն բնագիրը (օսմանյան թուրքերեն)<sup>1</sup>:

Այս հիրավի ուշագրավ և, կրկնենք, եզակի աղբյուրը հսկայական նյութ է պարունակում թե՛ հայ և թե՛ վրաց ժողովուրդների XVI դ. սոցիալտնտեսական պատմության վերաբերյալ: Ցավոք, մեզանում այն գրեթե անտեսված էր, և միայն վերջին տարիներին է հայտնվել առանձին հետազոտողների ուշադրության կենտրոնում (հիշենք Ա. Մելքոնյանի հայտնի մենագրությունը Ջավախքի մասին և Ա. Ակոպովի Տայքին նվիրված աշ-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2017:

1 Տե՛ս Զուրաբիշվիլի Զոլադիուսի ճիշտ թարգմանությունը, «თურქული ტექსტი გამოხცა, თარგმანი, გამოკვლევა და კომენტარები დაუროთო სერგი ჯიქია, წიგნი II: თარგმანი, თბილისი, 1941. [Gurjistanis vilaiet'is didi davt'ari, t'urk'uli tek'sti gamokhts'a, t'argmani, gamokvleva da komentariebi daurt'o Sergi Jik'ia, tsigni II: t'argmani, T'bilisi, 1941]. Devter-i mufassal-i vilâyet-i Gürcüstan, türkçe metni tercüme, tetkik ve tehşye iden S. Cikia, birinci kitap metin, Tbilisi, 1947 (արարատառ, այսուհետև՝ Բնագիր):

խատությունը)<sup>2</sup>: Սակայն ինչպես Ա. Մելքոնյանի, այնպես էլ Ա. Ակոպովի ուսումնասիրությունները հիմնված են Ս. Զիքիայի վրացերեն հրատարակության վրա: Մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ նրա բնագիրը հնարավորություն է ընձեռում նոր եզրահանգումներ կատարել պատմական Տայքի (ինչպես նաև հարակից մի շարք տարածքների) ազգային նկարագրի վերաբերյալ, մանավանդ էթնոհաշվի առնելը, որ Ս. Զիքիայի մոտ հանդիպում են բավականաչափ թվով աշխարհագրական տեղանուններ և անձնանուններ, որոնք հեղինակը չի կարողացել վերծանել: Ներկա հոդվածում կփորձենք այս տեսանկյունից ևս ընթերցողին ներկայացնել մեր դիտարկումները և ճշգրտումները

## 1. «Գյուրջիստանի վիլայեթի» ձևավորումը

1549 թվականից սկսած՝ օսմանյան բանակները քայլ առ քայլ զավթում էին հյուսիսարևմտյան Հայաստանի և հարավարևմտյան Վրաստանի ընդարձակ շրջաններն ընդգրկող Սամցխեի աթաբեկության (վրաց. სსათაბჯო) տարածքը, որը մինչ այդ կիսանկախ պետական կազմավորում էր: Վերջինիս կազմի մեջ էին մտնում ինչպես Սամցխեն (Ախալցխայի գավառը), Փոցխովն ու հարակից որոշ վրացական շրջանները, այնպես էլ Մեծ Հայքի Տայք աշխարհն ամբողջությամբ և պատմական Գուգարքի Արդահան կամ Արտահան (օսմանյան աղբյուրներում, որպես կանոն, հիշվում է 2 հատվածով՝ Մեծ և Փոքր) և Զավախք գավառները: 1555-ին Սամցխեի աթաբեկության մեծագույն հատվածը, այդ թվում՝ Ախալցխա բերդաքաղաքը, անցան օսմանցիներին, իսկ արդեն 1578-ից հետո՝ մի քանի տարվա ընթացքում, նրանք տիրեցին նաև Զավախքին՝ հարակից շրջաններով<sup>3</sup>: Վերոհիշյալ տարածքներից էլ ձևավորվեց մի վարչամիավոր, որը նվաճողների հորջորջմամբ կոչվեց «**Գյուրջիստանի վիլայեթ**»: Նշենք, սակայն, որ մեր կողմից քննարկվող «Հարկացուցակում» գրանցված վարչական ներքին կառուցվածքը չի համապատասխանում XVI դարավերջին ըստ էյալեթների (թրք. eyâlet, «նահանգ»), կազմավորված օսմանյան վարչական բաժանման համակարգին: Ընդ որում, «վիլայեթ» եզրը՝ (թրք. vilâyet, դարձյալ «նահանգ» իմաստով), հետայդու չի գործածվում մինչև XIX դ. 60-70-ական թթ.: Բացի այդ, գրեթե նույն ժամանակ ստեղծված «Սուլթանների գրություններ» երկում, որի հեղինակն է նշանավոր օսմանյան պետական գործիչ Ֆերիդուն բեյը, որին Ղուկաս Ինձիճյանը կոչում է «**արքունի դիւանագիր**»<sup>4</sup>, Գյուրջիստանի վիլայեթի փոխարեն հանդես է գալիս արդեն Չլը-

2 Տե՛ս **Մելքոնյան Ա. Ա.**, Զավախք XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003: **Ակոպով Ա. Ա.**, Տայք. վարչամոդովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Եր., 2013: **[Melk'onyan A. A., Javak'ë XIX darum yev XX dari arajin k'arrordin, Yerevan, 2003. Akopov A. A., Tayk' varch'azogovrdagrakan patkerë XVI darits' XIX dari I yeresnamyaky, Ye., 2013].**

3 Ավելի մանրամասն տե՛ս **Զուլալյան Մ. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 1980, էջ 46-47: Նույնի՝ Հայ ժողովրդի պատմության XIII-XVIII դդ. հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա (քաղաքական պատմություն), Եր., 1990, էջ 122-123: **Մելքոնյան Ա. Ա.**, նշվ. աշխ., էջ 62-63: **Ակոպով Ա. Ա.**, նշվ. աշխ., էջ 54-55: 3. **[Zulalyan M. K., Arevmtyan Hayastanë XVI-XVIII dd., Ye., 1980. Idem, Hay žoghovrdi patmut'yan XIII-XVIII dd. harc'yerë äst yevropats'i heginakneri, girk' A (k'agak'akan patmut'yun), Ye., 1990. Melk'onyan, op. cit., p. 62-63: Akopov, op. cit., p. 54-55].**

4 Ֆերիդուն բեյի տվյալներին Ղուկաս Ինձիճյանն ամեն անգամ անդրադառնում է, երբ հարկ է լինում խոսել Արևմտյան Հայաստանի իրենից առաջ գոյություն ունեցած վարչական բաժանման մասին: Տե՛ս **Ինձիճեան Ղ.**, Աշխարհագրությունի չորից մասանց աշխարհի, մասն առաջին. Ասիա, հատոր Ա, Վէնետիկ-

րի կամ Ախալցխայի (փաշայանիստ կենտրոնի անունով) էյալեթը<sup>5</sup>:

Մրանց միջև հատկապես առկա են էական տարբերություններ ներքին վարչական բաժանման առումով: Այսպես. եթե Գյուրջիստանի վիլայեթում նշվում են 9 լիվա, որոնք իրենց հերթին կազմված են 28 նահիեից<sup>6</sup> (թրք. nahıye, նախնական նշանակությունը՝ «գավառակ», ավելի ուշ՝ «գյուղախումբ»), ապա Ֆերիդուն բեյի մոտ (ինչպես նաև վարչական կառուցվածքին նվիրված հետագա օսմանյան մյուս փաստաթղթերում) էյալեթի հիմնական միավորը սանջակն է (թրք. sancak), թեև վերջինիս զուգահեռ հիշվում է նաև լիվան: Այստեղից կարելի է եզրակացնել, որ «Հարկացուցակը» կազմողները նպատակահարմար են կարծել հարկատու բնակավայրերը գրանցել ըստ հին վարչական բաժանման, քանի որ նորաստեղծ վարչամիավորի սահմանները, հետևաբար՝ տարածքը, XVI դ. 2-րդ կեսի պատերազմների և օսմանյան նվաճումների հետևանքով անկայուն էին ու փոփոխական:

Վիլայեթի հարավային հատվածն ամբողջությամբ ներառում էր պատմական Տայքի գավառները: Ցավոք, քննվող փաստաթուղթը մեզ է հասել եղծված տեսքով: Մասնավորապես բուն Տայքի տարածքում ձևավորված վարչամիավորներից առավել ամբողջական կերպով պահպանվել են միայն Բանակի լիվա-գավառի ցուցակները: Նշված վարչամիավորը հիմնականում ընդգրկում էր պատմական Տայքի կենտրոնական, մասամբ՝ արևելյան շրջանները և «Հարկացուցակի» համաձայն՝ իր հերթին բաժանվում էր 3 նահիե-գավառակի<sup>7</sup>:

1. **Բանակի նահիե**՝ համանուն կենտրոն բերդավանով («ռաբաթ»<sup>8</sup>, թրք. Penek, Ս. Ջիքիայի վերծանմամբ՝ քանչ - Փանակ)<sup>9</sup>: Վարչամիավորը գրավում էր Ճորոխի կարևոր ծյուղերից մեկի՝ պատմական Բողխայի (Բոխա) կամ Օլթու-ջրի Պարտիզաց-ջուր (թրք. Berdizçay) վտակի ստորին ավազանը (այդ հատվածում՝ նաև Բանակ), ինչպես նաև՝ վերջինիս աջակողմյան Աղունդիր և Ագրակի-ջուր օժանդակների ձորահովիտները:

2. **Քյամլիսի նահիե**՝ համանուն կենտրոն բերդավանով: Այս բնակավայրը մենք նույնացնում ենք Սեբեոսի մոտ հիշատակվող «Խաղամախիք» (<Կաղամախիք) քաղաքի հետ (<ընդ քաղաք և ընդ Խաղամախիս») <sup>10</sup>: Մեր

Սուրբ Ղազար, 1806, էջ 65, 119, 113, 123, 137, 210: [Inčičyan Ğ., Ašxarhagrowth'wn čoric masanc ašxarhi, masn arajin. Asia, hat. A, Vénétiq – Sowrb Ğazar, 1806].

5 Տես «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Բ, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Եր., 1964, էջ 219-220: Ընդ որում, նախապես վարչամիավորի կենտրոնը Չղըր բերդավանն էր: Միայն ավելի ուշ՝ ամենայն հավանականությամբ 17-րդ դ. կեսերին, երբ պատերազմների հետևանքով վերջինս ավերվեց և անայացավ, նահանգային կենտրոնը տեղափոխվեց Ախալցխա բերդաքաղաք: Տես Ինձիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 123: [Inčičyan Ğ., op. cit., p. 123].

6 Առանց Օլթիի լիվայի նահիե-գավառակների, որոնց վերաբերյալ տվյալները պակասավոր են (Գ. Բ.) [Gurjistanis vilaiet'is didi davt'ari]:

7 Ինչպես Ս. Ջիքիայի, այնպես էլ մեր քարտեզագրական հիմնական աղբյուրը ցարական 5- վերստանց (ժամանակակից մասշտաբով՝ 1:210000) քարտեզի Դ-8. „Ольчи“ պլանշետն է: [Sebeos, Patmowt'youwn, E., 2005. Ibidem].

8 Գյուրջիստանի վիլայեթի տվյալները ցույց են տալիս, որ «ռաբաթ» (արաբերեն رباط , հայկական աղբյուրներում՝ «ռապատ») են կոչվել վարչական կենտրոն բերդերին կից բնակավայրերը: Ընդ որում, «ռաբաթ» նախնական իմաստով նշանակել է «կապ» (ըստ այդմ՝ «բերդին կից բնակելի մաս»): Այս բառն ունի նաև «իջևանատուն», այլև՝ «վանք», «մենաստան» իմաստները: Տես «Ընդարձակ տաճկերէն հայերէն բառարան», յօրինեաց Միքիան Աբիկեան, Կ. Պոլիս, 1892, էջ 279 (այսուհետև՝ Աբիկեան): Հմմտ. Աճառյան Հր., Հայերեն արևմտական բառարան, Դ հատոր, Ե., 1979, էջ 141: [Gurjistanis vilaiet'is didi davt'ari. p. 362].

9 Տես շրջանի շահնոս շահնոսի ճոճ ճոճ, էջ 332-333: [Melk'onyan, op. cit., p. 76].

10 Տես Սեբեոս, Պատմություն, Եր., 2005, էջ 54 (զուգահեռ գրաբար և աշխարհաբար տեքստերով): Ընդ

կարծիքով՝ Կաղամախիքը Կաղամախիս>Կաղմըխիս անցումով, ժամանակի ընթացքում և, ըստ էության, որոշակի օտար ազդեցության ներքո աղավաղվելով՝ վերածվել է Քյամախիսի<sup>11</sup>: Ընկած էր Պարտիզաց-ջրից (Բանակ) հյուսիս՝ վերջինիս Բանջուրուտ (ավելի ուշ, վրաց. ազդեցությամբ՝ Ծանջուրջո - Փանջուրեթ) օժանդակի ձորահովտում:

3. **Փանասկերտի լիվա՝** համանուն ռաբաթ-բերդավան կենտրոնով: Վարչամիավորն ընդգրկել է Բողխա-Օլթու-ջրի դարձյալ աջակողմյան Փանասկերտ վտակի և վերջինիս՝ Օլոր կամ Օլորձոր (Ոլոր) օժանդակի ձորահովիտները, իսկ հարավում՝ նույն Օլթու-ջուր գետի միջին հոսանքի շրջանը մասամբ:

Ըստ «Հարկացուցակի»՝ վերոհիշյալ 3 լիվա-գավառները միասին ունեին 109 բնակավայր՝ գյուղ, ագարակ (թրք. çiftlik), մեզրե (թրք. mezrea, վարուցանքի համար նախատեսված ագարակ), որոնցից 14-ն անբնակ էր (ամենայն հավանականությամբ, ամայացել էին պատերազմական գործողությունների ընթացքում), 5-ը չէին բնակեցված, իսկ 7-ի վերաբերյալ աղբյուրում բացակայում է որևէ տվյալ: Փաստորեն Բանակի գավառակում գրանցված բնակավայրերից բնակեցված են եղել 83-ը կամ գրառվածների շուրջ 80 %-ը: Ինչպես վերը նշել ենք, «Հարկացուցակում» հիշվում են նաև Օլթիի (թրք. նաև Օlt) և Մամրվանի (ավելի ուշ՝ Նարինան) գավառները, որոնք ընկած էին Բողխա-Օլթիի վերին ավազանում և, դատելով «Հարկացուցակում» հանդիպող աղճատված և ոչ-ամբողջական տեղեկություններից, կազմում էին մեկ միասնական վարչամիավոր՝ Օլթիի լիվան: Ընդ որում, տվյալները ցրված են քննարկվող փաստաթղթի տարբեր հատվածներում: Այսպես, Մամրվանի գյուղերն ընդհանուր ցանկով հիշատակվում են Ախալքալաքի լիվայից<sup>12</sup>, իսկ Օլթիի և Մամրվանի՝ ըստ առանձին նահիեների, ավելի ընդարձակ մեկ այլ ցուցակ՝ Բանակի լիվայից անմիջապես հետո<sup>13</sup>: Ցավոք, այս ցանկերում տեղանունները (հատկապես՝ գյուղերի) զգալիորեն աղավաղված են և անընթեռնելի, թեև որոշակի տոկոս են կազմում նաև վերծանվածները: Ա. Մելքոնյանի կարծիքով՝ սա բացատրվում է այն հանգամանքով, որ Օլթիի լիվա-գավառի ձևավորումը XVI դ. վերջին քառորդին դեռ լիովին չէր ավարտվել, հետևաբար՝ բնակավայրերը մանրամասն հաշվառման չէին ենթարկվել<sup>14</sup>:

## 2. Տեղանունները

Անցնենք մեզ հետաքրքրող առավել կարևոր հարցերից մեկի քննարկմանը՝ տեղանուններին: Ընդ որում, գյուղերից բացի՝ որոշակի անդրադարձ ենք կատարելու նաև ագարակներին, ինչը կարևորվում է հատկապես մանրատեղանվանագիտության (microtoponymica) տեսանկյունից: Գաղտնիք չէ, որ տեղանունները լավագույնս և սպառիչ կերպով կարող

որում, նույն տեղանվան մեկ այլ աղավաղումը հանդիպում ենք «ի դաշտին Խաղամխեսայ» պարբերության մեջ: Նույն տեղում, էջ 48: Հմնտ. «Հին Հայոց տեղոյ անունները», գրեց **Հիւրձան Հ.**, թարգմանեց **Պիլէգիկճեան Հ. Բ.**, Վիեննա, 1907, էջ 360:

11 Ս. Ջիբիայի ընթերցմամբ՝ յոսմոս-«Քիամախիս»: Տես ցըրչոսիճանս Յուլայոտոս ճուլո ճոյտո, էջ 362:

12 Տես Բնագիր, էջ 262:

13 Նույն տեղում, էջ 408-410:

14 Տես **Մելքոնյան Ա. Ա.**, նշվ. աշխ., էջ 76: 14. [Melkonyan, op. cit., p. 76].

են բացահայտել որևէ աշխարհագրական տարածքի ազգային պատկերը: Ցավոք, հայկական միջավայրում, կապված մեր պատմության դաժան իրողությունների հետ, այդ օրինաչափությունը ոչ միշտ է գործել, քանի որ Հայաստան աշխարհը, բազմիցս ենթարկվելով օտար նվաճողների վայրագ ասպատակություններին և նրանց կողմից անխնա ամայացվելով, գրկվել է ոչ միայն իր բնիկ ժողովրդից, այլ նաև կորցրել տեղանունների հիմնական զանգվածը: Այս առումով Տայքը, հայկական մի շարք այլ տարածաշրջանների համեմատությամբ, բարեբախտաբար բացառություն է կազմում, քանի որ այն, ընդհակառակը, հիմնականում պահել է իր տեղանվանության (toponymy) հայեցի տեսքը: Դա բացատրվում է մի շարք հանգամանքներով: Նախ՝ տեղի հայ բնակչությունը չի ենթարկվել այնպիսի զանգվածային ոչնչացման կամ բռնագաղթի, ինչպես, ասենք, Այրարատը (մասնավորապես՝ Արարատյան դաշտը) կամ Տուրուբերանի, Վասպուրականի, Պարսկահայքի և այլ նահանգների առանձին շրջաններ: Այնուհետև՝ XVII-XVIII դդ. Տայքի ողջ տարածքում տեղ գտած զանգվածային կրոնափոխության գործընթացում հսկայական չափերով ընդգրկվեցին տեղի քաղկեդոնական հայերը (ծաթեր կամ «վրացիներ»)՝<sup>15</sup>: Մեր ժողովրդի պատմության այս ողբերգական իրադարձությունը, այնուամենայնիվ, թող տարօրինակ չհնչի, «նպաստեց», տարածաշրջանի հայեցի տեղանունների պահպանմանը, քանի որ նախկին քաղկեդոնականները, մնալով բնօրրանում՝ ի վիճակի եղան դրանք փոխանցելու սերնդե սերունդ: Սա է այն հիմնական պատճառը, որ «Հարկացուցակում» գրանցված տեղավայրերն իրենց անվանումները պահեցին ո՛չ միայն մինչև XX դարասկիզբ, այլև՝ վստահորեն կարելի է ասել, պահում են նաև մեր օրերում, չնայած 1960-1970 ական թթ. Թուրքիայի Հանրապետության իշխանությունների կողմից կիրառվող համատարած «թրքացման» քաղաքականությանը, որը շարունակվում է առ այսօր: Իհարկե, չպետք է մոռանալ, որ օսմանյան հարկացուցակներում տեղանունները ներկայացված են արդեն իսկ զգալիորեն աղավաղված տեսքով, ինչը կապված է դրանց թուրք գրագիրների կողմից ընկալման և արաբատառ գրանցման հետ: Չպետք է մոռանալ նաև, որ կրոնափոխ հայերի զգալի մասը հետագա երկու հարյուրամյակի ընթացքում աստիճանաբար անցավ թրքախոսության, ինչը նույնպես հանգեցրեց տարածաշրջանի տեղանունների մի մասի անխուսափելի աղճատմանը, անգամ՝ օտարացմանը: Սրանով հանդերձ, Բանակի գավառակի գրեթե բոլոր՝ թվով 31 գյուղերը, անաղարտորեն պահել էին իրենց հայեցի բնիկ անվանումները: Ավելի բարդ է գյուղերին կից «մեզրե»-ագարակների խնդիրը, որոնք, Ս. Զիքիայի կողմից հիմնականում չեն վերծանվել: Ստորև ներկայացնում ենք Բանակի գավառակի մի շարք ագարակների մեր կողմից առաջարկվող անվանումները՝ նշելով նաև գյուղերը, որոնց դրանք պատկանել են.

### 1. Գորքոց կամ Քորքոց – Բարիկ գյուղ<sup>16</sup>

<sup>15</sup> Ըստ 17-րդ դ. պատմիչ Հակոբ Կարնեցու տվյալների այս հայերը «կէսն կրօնին Վրացի, բայց Հայի լեզուս խօսէին»: Տես **Յակովբ Կարնեցի**, Տեղագիր Վերին Հայոց. Յիշատակարան ԺԷ. դարու, Վաղարշապատ, 1903, էջ 17-18: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ. II, կազմեց՝ **Հակոբյան Վ. Ա.**, Եր., 1956, էջ 554:

<sup>16</sup> Տես Բնագիր, էջ 343:

2. **Կալոց, Կորկոտ, Արեգս** կամ **Արեգի, Զուջուռ** – Արմաշեն գյուղ<sup>17</sup>
3. **Վարդևան** (անձնանունից) և **Սալորվան**<sup>18</sup> – Մուշեխ-Մուշեղ գյուղ<sup>18</sup>
4. **Սյատորուտ**<sup>19</sup> – Կոթ գյուղ<sup>19</sup>
5. **Խաչգլուխ** – Ծաթագրակ գյուղ<sup>20</sup>
6. **Գոմանց** և **Սալորվան** – Լազրվանց գյուղ<sup>21</sup>,
7. **Ծաղկաձոր** – Բերդիկ գյուղ<sup>22</sup>
8. **Ուռնկ, Մոսեստափ** – 2-ն էլ՝ Էգեձոր գյուղ<sup>23</sup>
9. **Արծաթա**<sup>24</sup>, **Մեհանք, Լավջուր, Ամրե(ա)վերակ** – Գողիք (Գողթիկ) գյուղ<sup>24</sup>
10. **Վանք** և **Զարդեր** – Վաղավեր գյուղ<sup>25</sup>

Հարկ է նշել, որ որոշակի սեփականատերերի պատկանող ավելի մանր բնակավայրերի («չիֆթլիկ»-ագարակներ) մի մասը գրանցված է նրանց անունով, ինչպես՝ **Գուլազիզի** չիֆթլիկ, **Վարձելի** (Վարզելի) չիֆթլիկ, «գյուրջի» (իմա՝ «վրացի») **Մկրտչի** որդի **Մուրադխանի** չիֆթլիկ (այդ մասին՝ ավելի մանրամասն կխոսվի իր տեղում-Գ.Բ.), **Տիրատուրի** որդի «գյուրջի» **Զաքարի** չիֆթլիկ, **Զուրաբի** չիֆթլիկ են: Հանդիպում են նաև ոչ-հայկական առանձին տեղանուններ, ինչը հիմնականում արդյունք է վիրաքաղկեղոնական ազդեցություն կամ տվյալ բնակավայրում վրացական համայնքի առկայության: Այդ երևույթի լավագույն օրինակը, թերևս **Տղածկուրակ** (արաբատա՝ طغاسكورك - Diğaskürek) անվանումն է, թեև-ակ վերջավորությունն արդեն իսկ խոսում է հայկական ներկայության մասին<sup>26</sup>:

Ակնհայտ վրացական պետք է համարել նաև **Մոխրուլ (Միխրել)** և **Զեմոճալա** (մեզրե)<sup>27</sup> տեղանունները: Թերևս վրացական ազդեցություն նկատելի է նաև **Զախձոր (Զախձոր)**<sup>28</sup> գյուղի մեզրեի անվան մեջ, որը Ս.

17 Տե՛ս նույն տեղում, էջ 345:  
 18 Տե՛ս նույն տեղում, էջ 348:  
 19 Տե՛ս Բնագիր, էջ 349:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 352: Թրք.՝ Զաղգերեկ ( արաբ.՝ زادكرک ):

21 Տե՛ս նույն տեղում, էջ 359: Արաբատա՝ لارواقس - Լազրվանս: Հետագա դարերում գյուղանունն էլ ավելի այլափոխվելով՝ ի վերջո դարձել էր Նազրվան (Назырван): Տե՛ս писк населенных пунктов Карсской области, с. XXXV., – „Памятная книжка и адрес-календарь Карсской области на 1914 год“, Карс, 1913 (այսուհետև՝ Список): Հանդիպում է նաև Назырванс-Լազրվանց տարբերակը (տե՛ս 5-վերաստանց քարտեզ, Դ-8): Ի դեպ, նույն լեզվական օրինաչափությամբ պատմական Արագածոտնի Լազրվան գյուղը վերածվել է Նազրվանի: Տե՛ս «Ջամբր. Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնաից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն», համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար և վշտակոծ Կաթողիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 141, 292: [«Jambrr Girik', vor koch'i yishatakaran ardzanats'uts'ich' hayeli yev parunakogh bnawits' vorpissut'eants' Srboy At'vorroys, yev ivroy shrjakayits' vanoreits'n», hamazhoghovets'eal yev sharadrets'eal i Simeone ts'awahar yev vshtakots Kat'ughikose Yerevants'woy, Vagharshapat, 1873, p. 141, 292].

22 Տե՛ս Բնագիր, էջ 360: Ս. Զիքիան գյուղանունը՝ որոշակի կասկածանքով, վերծանել է «Բարնիկ» (بارنيك): Ելնելով այն հանգամանքից, որ այս տարածքում գոյություն ունեն Բերդիկ բնակավայր, մենք առաջարկել ենք արաբագիր ڪچر-տարբերակը, որը կարելի է համարել Բերդիկի աղավաղում, ընդ որում՝ խոսակցական հայերենում դ-թ անցումով: [Bnagir, p. 292].

23 Տե՛ս նույն տեղում, էջ 262: [Ibid., p. 262].

24 Տե՛ս նույն տեղում, էջ 363: [Ibid., p. 363].

25 Տե՛ս նույն տեղում, էջ 366: [Ibid., p. 366].

26 Տե՛ս Բնագիր, էջ 351: Ի դեպ, ցարական 10 վերստանց քարտեզում բնակավայրը նշված է Таваихурь ձևով, ինչը հիշեցնում է Զավախի Տաբաձոր տեղանունը (վրաց ტაბაყჯორ):

27 Տե՛ս նույն տեղում, էջ 347: Վրացերեն՝ ზემოჯალა, հայերեն «Վերին ձահճուտ»

28 Տե՛ս նույն տեղում, էջ 346: Ս. Զիքիան գյուղի անունը կարդացել է چارصور: Սակայն բնակավայրը հետագա սկզբնաբյուրներից ավելի շատ հայտնի է Չախսոր անունով (տե՛ս Список, էջ XXXV: „Материалы для описания Турецкой Армении: I“ – Эрзерумский вилайет, А. Д. Ерицова“, Тифлис, 1884, с. 28: Чახсур այսուհետև՝ **Еришов**): Անվանումը ենթադրում է հայերեն Զաղձոր-Զաղցրձոր (Զաղացաձոր) տարբերակը: Այս դեպքում

Ջիբրիան, որոշակի երկնտանքով, կարողում է **Ուռկեթ** (արաբ․<sup>29</sup> اوركيت): Մեր կարծիքով՝ վերջինս հայկական **Ուռկուտ** տեղանվան մի փոքր ձևափոխությունն է միայն<sup>30</sup>: Նույնն ենք տեսնում նաև մյուս 2 գավառակ-նահիեններում: Քյամլիսի գավառակում հիշվում է 12, իսկ Փանասկերտում՝ 27 բնակավայր<sup>31</sup> (հաշվարկից դուրս ենք թողել ագարակ-«չիֆթլիկներն» ու «մեզրեները»): Գրանցված տեղանունները, գրեթե առանց բացառության, դարձյալ հայկական են, և միայն հազվագյուտ դեպքերում են հանդիպում վրացական կամ թյուրքական տեղանուններ:

Քյամլիսի տարածքում կցանկանայինք առանձնացնել հետևյալ նույնանուն կրկնակ գյուղերը (Վերին և Ներքին): Թեև վերջիններիս անունները Ս. Ջիբրիան ընդհանուր առմամբ վերծանել է, սակայն ձեռնպահ է մնացել վերջնական ճշգրտումից: Անհրաժեշտ փոքր սրբագրումից հետո, պարզվեց, որ այդ բնակավայրերը կոչվել են **Վերին և Ներքին Սպիտակչուր**<sup>32</sup>: Պարզապես հայկական տեղանունների վատ իմացությունը խանգարել է վրացի արևելագետին ճիշտ եզրահանգման գալու: Ի դեպ, նույնը կարելի է ասել Քյամլիսի գավառակի մեկ այլ անբնակ գյուղի մասին, որի անունը հարկ է վերականգնել **Կարմիրխաչ**<sup>33</sup>: Հանդիպում են նաև բազմաթիվ հայանուն «մեզրեներ», որոնք կրկին Ս. Ջիբրիայի մոտ չեն վերծանված (լավագույն դեպքում՝ ընթերցված են մասամբ): Դրանցից առավել ուշագրավ են հետևյալ տեղանունները.

1. **Քյամլիսի գավառակ. Քարծոր՝ Սողոմոն գյուղ**<sup>34</sup>, **Նորածոր կամ Փորածոր (Բորածոր)**՝ Փերթեվան<Բերդավան գյուղ<sup>35</sup>, **Սորմոճ**<sup>36</sup> և **Գիրս կամ Քերս**՝ Կապան գյուղ<sup>37</sup>, **Սուրծոր**<sup>38</sup>:

2. **Փանասկերտի գավառակ. Քար(ե)կարմու(ն)ջ** (كاركرموج կամ كاركرمونج)<sup>39</sup>, **Գոմեր** (گمر), **Վարթե** կամ **Վարթա** (وارته), **Նավք** կամ **Նավիկ** (ناوک)<sup>40</sup>, **Ուղտատափ գյուղ**<sup>41</sup>, **Քարգուլի** (كارگولخ) և **Դավթի դուստր ծովերի ձալաջրակ մեզրե** (مزرعه چلاجرک صوویر بنت داوید)՝ Գեամալի գյուղ<sup>42</sup>, **Սենակս** (سناکس) և **Ուռեկ** (اورک)՝ Մեհանք (<Մեհեհանք՝) գյուղ<sup>43</sup>, **Միագոս**

գյուղանվան արաբատառ տարբերակը կլինի خاصور:

29 Տես Բնագիր, էջ 346: [Bnagir, p. 346].

30 Նման ձևափոխություն կարելի է հանդիպել նաև պատմական Աղվանքի Վարդաշենի գավառի Ճալուտ (թուրքերեն՝ Calıt) հայաբնակ գյուղի ավելի տարածված Ճալեթ անվանաձևում:

31 Ներառյալ՝ անայցած գյուղերը:

32 Արաբ․ اسپيداقچور عليا و سفلا - İspitakçur-i Üleya և İspitakçur-i Süflâ: Դրանցից բնակեցված էր միայն Վերինը: Տես Բնագիր, էջ 376-377:

33 Տես Բնագիր, էջ 377: Արաբատառ գրությամբ տեղանունը նկատելիորեն աղճատվել է և վերածվել Kâr-mihaç (كارميرخاچ < كارميرخاچ):

34 Տես նույն տեղում, էջ 373: Թրք. Kârsur, արաբ. كارسور:

35 Տես նույն տեղում, էջ 374: Արաբատառ գրությունը հնարավորություն է ընձեռում տեղանունն ընթերցել վերոհիշյալ 2 ձևերով՝ نوراصور – Norasur կամ پوراسور – Porasur:

36 Տես 5-վերստանոց քարտեզ, Դ-8. „Яйля Мирмоиъ” (<Սորմոճ):

37 Տես Բնագիր, էջ 375: Արաբագրում նախապես «թ» և «գ» հնչյունները արտահայտվել են նույն կ (paw) տառով:

38 Տես նույն տեղում, էջ 377: Արաբ. موتصور – Mutsur կամ Mutsor:

39 Հմտ. Տայքի Բերդագրակ գավառի Քարեկարմունջ գյուղը: Տես **Ինձիձեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 133:

40 Հմտ. Ալաշկերտի գավառի Նավիկ գյուղը: Տես Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ.2, Եր.1982, էջ 500: Տեղանունը կարելի է կարդալ նաև Թավիկ կամ Թավուկ (արաբ. ثوك):

41 2-ն էին Վերին և Ներքին: Տես Բնագիր, էջ 381: Գյուղանվան արաբատառ գրությունը թույլ է տալիս այն ընթերցել Ուղտատափ (اوغظاب կամ اوغظاب): XX դարակցքին գյուղի անունը, նկատելիորեն աղավաղվելով, վերածվել էր **Օղդադափի** (Orдадаб: Տես 5-վերստանոց քարտեզ, Դ-8): Հմտ. Orдадаб: Տես Список, էջ XXXVII:

42 Տես նույն տեղում, էջ 382: Սա, թերևս Փանասկերտի միակ թյուրքանուն գյուղն էր: 20-րդ դ. սկ. հայտնի էր նաև Գեամանլու անունով (Гесманлы): Տես Список, էջ XXXVI:

43 Տես Բնագիր, էջ 384:

(արաբ.՝ مياكوم), **Բերասեղ** (արաբ.՝ بيرة ديبغ), **Անմեռոց** (արաբ.՝ انماروس), **Ուլիտափ** (արաբ.՝ اولی طاب)՝ Կառնավաս (թերևս՝ նախնական Գառնավանց)<sup>44</sup> :

Բանակի գավառի տեղանուններում, ընդ որում, մի քանի դեպքերում միայն, նկատվում է հայկական տեղանուններին զուգահեռ թուրքերեն տարբերակների հանդես գալը: Այսպես, Բանակի գավառի **Ծաղկոց** (արաբ.՝ زاغوس) գյուղի համար նշվում է yöklizik (թրք.՝ «կարմիր գյուղ») օտար անվանումը<sup>45</sup>: Ընդ որում, թուրքական նույն անունն է կրում նաև Փանասկերտի գավառակի **Կարմրիկ** գյուղը (արաբ.՝ قارمريك)<sup>46</sup>: Այս պարագայում նկատելի է հայկական տեղանվան պարզ թարգմանությունը, երևույթ, որը Հայաստանում հետագա դարերի ընթացքում ստանալու էր զանգվածային բնույթ: Այսպիսով, մեր հաշվարկներով Բանակի գավառի 3 գավառակ-նահիենների վերծանված (կամ՝ մոտավոր վերծանված) թե՛ բնակեցված և թե՛ ամայի 74 գյուղանուններից հայկական են –66ը (շուրջ 90 %-ը): Ցավոք, «Հարկացուցակի» տեղավայրերի անվանումների մի մասն այդպես էլ մնում է անվերծանելի, ինչը հնարավորություն չի տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմելու քննարկվող նյութի վերաբերյալ: Սակայն արդեն իսկ վերը բերված տվյալները, կարծում ենք, ինքնին խոսուն են: Մենք ձեռնպահ ենք մնում նման հաշվարկ կատարել նաև Օլթիի լիվա-գավառակի տեղանունների համար, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, դրանք ամբողջական չեն և հիմնականում՝ չվերծանված: Սակայն որպեսզի ընթերցողի մոտ որոշակի պատկերացում ստեղծվի նաև Տայքի այս գավառի տեղանվանության բնույթի մասին, ստորև ներկայացնում ենք նաև Ս. Զիքիայի կողմից (մասամբ՝ նաև մեր համեստ հնարավորություններով արված) որոշ վերծանումներ. Մամրվան (արաբ.՝ مامیروان), Գորտագրակ (արաբ.՝ كوردارك), Քարկուտակ (արաբ.՝ كاركوك)<sup>47</sup>, Խոշակ կամ Խոշաք (արաբ.՝ خوشاك), Կզըլքիլիսա (قزل کليسا, թրք.՝ «կարմիր եկեղեցի»), Վարդենուտ (արաբ.՝ وارتوت), Վասկաձոր (<Վասսակաձոր, արաբ.՝ واصكصور), Սամիղար (<Վրաց. სამიჯარო, արաբ.՝ صمقار)<sup>48</sup>, Մեհանք (<Մեհեանք՝, արաբ.՝ مهانك), Գորքիս՝ (արաբ.՝ كوركس), Ախա (արաբ.՝ اखा), Ծարս կամ Ծառս (արաբ.՝ زارس), Խնձորուտ (արաբ.՝ خنزور), Գյոքքիլիսա (արաբ.՝ كوك کليسا, թրք.՝ «կապույտ վանք»)՝<sup>49</sup>, Պլտաջուր (արաբ.՝ بلداجور)<sup>50</sup>, Բագեղ (արաբ.՝ باكيغ)<sup>51</sup>, Կթխուտ (արաբ.՝ كتخوت), Մասրաձոր (արաբ.՝ ماصرصور), Գոմք (արաբ.՝ كمك),

44 Արաբ.՝ قارنواس : Տե՛ս նույն տեղում., էջ 397: XX դ. սկ . **Կառնավազ** (Карнаваз): Տե՛ս Список, էջ XXXVII:

45 Տե՛ս նույն տեղում, էջ 362: Գյուղի անունը, հետագա աղավաղման հետևանքով, հնչում էր **Ջախկոս (Չախկոս)**: Տե՛ս Список, էջ XXXIV:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 390: Ս. Զիքիան այստեղ ևս գրեթե ամբողջությամբ վերծանել է գյուղանունը՝ չկարողանալով ճիշտ տեղադրել միայն արաբական վերջին «ե» տառը, որի դեպքում կստանայինք վերոհիշյալ տեսքը: Ավելի ուշ թուրքական տարբերակը վերջնականապես դուրս էր մղելու բնիկ տեղանունը: Տե՛ս Список, էջ XXXVI:

47 **Գորտագրակը** և **Քարկուտակը** Մամրվանի «մեզրե»-ագրակներն էին:

48 Վրացերեն՝ «եռաղուտ»: Տե՛ս նաև Ерпюв, նշվ. աշխ., էջ 26:

49 Հատկանշական է, որ վերը նշված թուրքական տեղանունները անգամ քրիստոնեական-հայկական բնույթ ունեն:

50 Ս. Զիքիան սխալ է վերծանել գյուղանունը՝ «Յըլտաջուր» (արաբ.՝ بلداجور : Տե՛ս Բնագիր, էջ 262): Բնակավայրը հայտնի էր նաև Պլտաջուր կամ Պոլտաջուր անունով: Տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին IV, գործ թիվ 224, թերթ 145 (այսուհետև՝ ԳԱԹ): **Ерпюв**, նշվ. աշխ., էջ 26: Былладжур: Կոչվել է նաև Պլտաձոր (օտար հորջորջմամբ՝ «Պլտատոր»): Տե՛ս **Էփրիկեան Ս.**, Պատկերագրի բնաշխարհիկ բառարան, Վենետիկ-Ս. Ղազար, հատ. 2, էջ 301:

51 Տե՛ս Բնագիր, էջ 262 (Մամրվանից մինչև Բագեղ):



Բերդաձոր (Փերթաձոր, արաբ. ڤرتاڤور), Ուռեկ (արաբ. اورك), Սիմիրդոն (արաբ. سموردين), Ավեր Սալորիկ՝ (արաբ. اور سلورك), Վասլիկ (Վասիլ անձնանունից, արաբ. واسلك), Բարդի (արաբ. باردي), Ռաբատ (արաբ. رباط), Խոշքար՝ (պրսկ.-հյր., արաբ. خوشكار)<sup>52</sup>, Կոծոխուր (վրաց. ორჯობოწოვ-«ծորենի», «կծոխուր», ռուս.՝ «барбарис». բառը տարածված էր նաև հայերենի արևելյան բարբառներում)<sup>53</sup>, Անձավ (արաբ. انزاو, թրք. արտասանությամբ՝ Anzaf), Ավերսար կամ Ուրսար (արաբ. اورسار), Փերթուս-Բերդուս (արաբ. ڤرتوس), Փառակիս (արաբ. ڤراكس)<sup>54</sup>, Արասթ (արաբ. اراصد)<sup>55</sup>, Արուք կամ Էրուք (Էյրուք, արաբ. عروك), Փոսիկ (արաբ. ڤوسيك), Ձկնաջուր կամ Չենաջուր (արաբ. چنچور کيام چنچور)<sup>56</sup>, Վերին Պատաձոր (արաբ. ڤرتاڤور), Ուռեկ (արաբ. اورك), Սուրբ Սարգիս (թրք. Սրվ Սարգիս ձևով, արաբ. سڤ سرکيس), Նուսունք < Լուսունք (արաբ. نوسنك)<sup>57</sup>, Գեղիկ (արաբ. كيعك կամ كيعك), Արտոս կամ Արդոս (արաբ. اردوس), Օսկեհատ < Ոսկեհատ (արաբ. اوسكى حات), Ջերմուկ (արաբ. چرمك - Չերմիկ), Գինա(ե)փոս (արաբ. كئاڤوس) ևն<sup>58</sup>:

### 3. Անձնանունները

«Հարկացուցակի» առավել հետաքրքիր և, սխալված չենք լինի, եթե պնդենք, կարևորագույն մասը, հարկատու անձանց ցանկերն են: Ըստ առանձին բնակավայրերի՝ ներառյալ ագարակ-գյուղակները, հաշվառված են իսփենջ մուծող անձինք, ավելի ձիշտ՝ տուն-գերդաստանների գլխավորները: Հարկի այս տեսակը գանձվել է քրիստոնյաներից մինչև XVIII դ.՝ կազմելով տարեկան 25 ալչե<sup>59</sup>: Այստեղ, սակայն, առավել կարևորն այն հանգամանքն է, որ հարկատուները գրանցված են անուն առ անուն:

Ինչպես հայտնի է, անձնանունն ազգային պատկանելության կարևոր (որոշ վերապահումով՝ նաև գլխավոր) ցուցիչներից մեկն է: Հատկանշական է, որ Ս. Ջիքիան այս կապակցությամբ իրավացիորեն հետևյալ միտքն է արտահայտել. «Անձնանունների ուսումնասիրությունը կարող է նաև լույս սփռել ազգային կազմին վերաբերող հարցի վրա»<sup>60</sup>: «Հարկացուցակում», իրոք, զետեղված հսկայական և խիստ շահեկան նյութը հազվագյուտ տե-

52 Հմմտ. համանուն գյուղը Էրզրումի նահանգի Կեղիի (Գեղի, Գղի) գավառում: Տե՛ս Ա-Գօ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912, էջ 192: [A-Do, Vani Bit'lsi yev Erzurmi vilayet' nery, Ye., 1912].

53 Տե՛ս Աձառյան, նշվ. աշխ., Բ հատոր, Ե., 1973, էջ 617:

54 Գյուղանվան համար տե՛ս Երևույթ, նշվ. աշխ., c. 25: „ Перекис“: [Ačařyan, op. cit., vol. B, Ye., 1973, p. 617].

55 Գյուղը կոչվել է նաև Արասթի: Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., ն. տ. :

56 Տե՛ս Սրվանձոտյանց, նշվ. աշխ., էջ 505. «Ձկնաջուր կամ Ջ(2)ենաջուր»: Գյուղը կոչվել է նաև Չինարջուր: Տե՛ս ԳԱԹ, նույն տեղում, թ.148: Հմմտ. Ա-Գո, նշվ. աշխ., էջ 197:

57 Տե՛ս Երևույթ, նշվ. աշխ., էջ 30: „Лысынк“:

58 Կթխուտից սկսած՝ տե՛ս Բնագիր, էջ 408-410: Հատկանշական են նաև որոշ աշխարհագրական կետերի (օրյեկլո) անվանումները, որոնք նույնպես լրացուցիչ պատկերացումներ են տալիս Տայքի տեղանվանության վերաբերյալ: Այս առումով ուշագրավ է Բանակի գավառի Տղածկուրակ գյուղի շրջակա Տիրատուրի որդի «գյուղջի» Ջաքարին պատկանող ագարակի (թրք. çiftlik) արտավայրերից (յայլա, թրք. yayla կամ yaylak) մեկի Ս. Ջիքիայի կողմից չընթերցված անունը՝ Մեղրաբերդ (արաբ. بورت مغره): Ընդ որում, տեղանվան վերջին բաղադրիչը գրանցված է նաև դեպքերում թուրքերենին հատուկ - bürt ձևով (տե՛ս Բնագիր, էջ 352): Կցանկանայինք առանձնացնել նաև Փանասկերտի գավառակի Գեամալի գյուղի մոտակա Աշտարակ (արաբ. اشتراك) և Քարգոլիս (արաբ. كركوخ) ամառային արտավայրերը: Ընդ որում, այս տեղանունները Ս. Ջիքիան վերծանել է որոշակի երկմտանքով (թերևս դա բացատրվում է դրանց մաքուր հայկական բնույթով): Տե՛ս նույն տեղում, էջ 383:

59 Տե՛ս «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. կանունսմաններ)», թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ.Կ. Զուլայանի, Եր., 1964, էջ 132:

60 Տե՛ս Բնագիր, Ներածություն, էջ XV:

ղեկություններ է հաղորդում ոչ միայն XVI դ. վերջի Բանակի լիվա-գավառի, այլև ողջ Գյուրջիստանի նահանգի բնակչության ինչպես ազգային կազմի, այնպես էլ՝ թվաքանակի վերաբերյալ: Անշուշտ, այստեղ ևս հանդիպում են որոշակի խնդիրներ՝ կապված արաբատառ թուրքերենով հայկական և վրացական անձնանունների գրառման աղավաղումների հետ: Այս կապակցությամբ հարկ է հաշվի առնել, որ տեղանունները և անձնանունները գրանցելիս, օսմանցի դպիրները բավական ազատ են վարվել՝ չհետևելով ուղղագրական խիստ կանոնների: Դա է պատճառը, որ նույն անվանումը հաճախ գրանցվել է տարբեր ձևերով: Այսպես, Կարապետ անձնանունը «Հարկացուցակում» հանդիպում է 3 ձևով՝ كره بید , كره بید , كره بید :

Բացի այդ՝ տեղ գտած անձշտությունների մեջ կրկին որոշակի դեր է կատարել Ս. Զիքիայի ազգային պատկանելիությունը, ինչը նրան հաճախ խանգարել է շատ անձնանունների պարագայում ճիշտ կողմնորոշվել՝ դրանց վերջնական ընթերցման հարցում: Չնոռանանք ավելացնել նաև, որ բավական թվով անձնանուններ պարզապես անհնար է ճշտել՝ դրանց վերաբերյալ տեղեկությունների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, «Հարկացուցակում» առկա ընդգրկուն նյութը հիմնականում ընթերցված է և հնարավորություն է ընձեռում կատարելու անհրաժեշտ հետևություններ և եզրահանգումներ:

Ինչպես նշեցինք, փաստաթղթում հարկատու տուն-գերդաստանները գրանցված են ըստ տանտերերի: Ընդ որում, հանդիպում են անունների գրանցման որոշակի կաղապարներ կամ բանաձևեր. 1) հոր անուն-որդու անուն, 2) եղբոր անուն, 3) թոռան անուն (եթե նրանք չափահաս էին, հետևաբար՝ հարկատու), 4) ուղղակի անձի անուն (օր.՝ Murad nam): Անձնանունները կարելի է միավորել ըստ հետևյալ խմբերի.

Ա. Հայկական անուններ (ազգային-քրիստոնեական և ընդհանուր քրիստոնեական):

Բ. Մահմեդական անուններ, որոնք XVI-XVIII դդ. տարածված էին նաև հայկական միջավայրում:

Գ. Վրացական կամ գերազանցապես վրացական միջավայրում տարածված անուններ:

Դ. Ս. Զիքիայի կողմից չվերծանված անուններ: Նշենք, որ դրանք զգալի մասով հայկական են և կարելի է վերականգնել, ինչը և փորձել ենք կատարել<sup>61</sup>:

Հաշվի առնելով, որ «Հարկացուցակը» պարունակում է հարյուրավոր անձնանուններ, որոնց սպառիչ ուսումնասիրությունը մի ամբողջ մենագրության նյութ է, մենք հիմնականում կանդրադառնանք ա. խմբում ընդգրկված անուններին, որոնք էապես նպաստում են կարևոր մի շարք հարցերի պարզաբանմանը: Այս խմբում մեր կողմից առանձնացված են 150-ից ավելի անձնանուն (ներառյալ՝ խոսակցական տարբերակները), ընդ որում,

61 Այս հարցում լայնորեն օգտվել ենք Հրաչյա Աճառյանի 1942-1962 թթ. հրատարակված «Հայոց անձնանունների բառարան» կոթողային աշխատության 1-5 հատորներից: Ցավոք, Ս. Զիքիայի աշխատությունը մեծաձևի հայագետին ծանոթ չի եղել (ամենայն հավանականությամբ՝ նրան չէր հասել՝ Գ. Բ.): Այլապես բացառվում է, որ Հ. Աճառյանը «Հարկացուցակից» անհրաժեշտ հղումներ չաներ: Օգտագործել ենք նաև Տիգրան Ավետիսյանի «Հայկական ազգանուն» ուսումնասիրությունը (Եր., 1987):

դրանք առավել բազմաքանակն են: Անշուշտ, մեկ հողվածում այս բոլորին հնարավոր չէ անդրադառնալ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մենք ընտրել ենք կարևոր չորս տասնյակից ավելի անուններ, որոնք աչքի են ընկնում առավել բարձր կրկնվող հաճախականությամբ՝ նշելով նաև այն բնակավայրերը, ուր ապրել են դրանք կրող անձինք<sup>62</sup>:

**1. Աբրահամ** (արաբ. ابراهم կամ ابراهم) – Կապան, Ուռեկ, Վերին Փանասկերտ, Ուղտատափ, Գեսմալի: Հանդիպում են նաև նույն անվան տարբերակները:

ա. **Աբրամ** (արաբ. ابرام) – Արմաշեն, Ուռեկ:

բ. **Բրամ**՝ (արաբ. برام) – Ուռեկ:

գ. **Ա/րիկ** (արաբ. ايريك, տարընթերցումը մերն է) – Կամ(ա)րիս:

դ. **Աբիկ** (արաբ. ابيك, տարընթերցումը մերն է) – Վերին Փանասկերտ:

ե. **Աբուլ** (արաբ. ابول) – Նորբերդ:

**2. Առաբել** (արաբ. اراكيل) – Ծաթագրակ, Ուղտատափ, Փերթոս (Բերդուս, մոտակա ագարակ), Կարմրիկ, Ներքին Ջուլաքար, Գոմրաձոր:

**3. Ասվատուր < Աստվածատուր** (արաբ. اصواتور) – Կոթ, Ծաթագրակ, Ուռեկ, Փերթոս (Բերդուս), Ներքին Ջուլաքար, Քարդուղս ՝, 2-րդ Բարիկ, Ուռեկ, Կամ(ա)րիս:

Բանակի գավառում լայնորեն տարածված են եղել նաև նույն **Աստվածատուր** անունից բխող և ժողովրդական միջավայրին հատուկ խոսվածքային հետևյալ տարբերակները.

ա. **Ատուր** (արաբ. اتور) – Ներքին Ջուլաքար:

բ. **Տատուր կամ Տատոր**<sup>63</sup> (արաբ. دادور կամ دادور) – Բանակ (Փանակ), Կոթ, Տղածկուրակ, Արսենակներ (<Արցնակ<Արծնյակ)<sup>64</sup>, Տաճ(ա)րակ, Կապան, Ուղտատափ (Օղդատափ), Գեսմալի: Կա նաև **Տուտուր** անվանաձևը (արաբ. تودور, Ծաթագրակ):

գ. **Ծատուր** (արաբ. زادور, տարընթերցումը մերն է) – Քյամխիս, Ծաթագրակ, Օլոր:

**4. Բուրթիկ < Բուրթել** (արաբ. بورد, տարընթերցումը մերն է) – Բարիկ, Կոձոր, Արմաշեն, Չախձոր, Տղածկուրակ, Ծաթագրակ, Քոթիք (Գոդիք), Քարգլուխ, Բանջրուտ, Գինափոս, 2-րդ Բարիկ, Տաճ(ա)րակ, Փանասկերտ, Ուղտատափ, Վերին Ջուլաքար, Կառնավաս: Ի դեպ, հիմնական՝ **Բուրթել** (արաբ. بورتيل կամ بورديل, տարընթերցումը մերն է), անունով անձինք են գրանցված Ուռեկում և Կառնավասում<sup>65</sup>:

**5. Գաբրիել** կամ խսկց. **Գա/րել** (արաբ. كاپريل կամ كاپريل) – Տղածկուրակ, Արսենակ, Քարգլուխ, Փանասկերտ, Վերին Փանասկերտ, Ուղտատափ, Կամ(ա)րիս, Կառնավաս:

**6. Գալոս կամ Գալոզ** (< Գալուստ, արաբ. كالوس կամ كالوز)<sup>66</sup> – Բանակ, Գուլազիզի ագարակ, Բարիկ, Բանջրուտ (Փանջրուտ), Բերդավան<sup>67</sup>, Ծա-

62 Նշենք, որ հաշվառումը կատարել ենք ըստ անունների: Իրականում հաճախ են հանդիպում մեկ բնակավայրում գրանցված նույն անունով մի քանի անձինք:

63 Տատուր անվան մասին ավելի մանրամասն տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. եր., 1962, էջ 140:

64 Համանուն 3 գյուղեր էին՝ Վերին, Միջին և Ներքին: Տե՛ս Բնագիր, էջ 355:

65 Բուրթել անձնանվան մասին ավելի մանրամասն տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Բ, եր, 1944, էջ 379:

66 Միջին դարերում հայկական միջավայրում տարածված է եղել նաև Գալոց անունը, որից էլ հնարավոր է Գալոս տարբերակը: Տե՛ս **Աճառյան** Հ., նշվ. աշխ., հատ. Ա, եր., 1942, էջ 439-440:

67 XVI դ. գյուղանունը արդեն հնչում էր **Փերթեվան** (արաբ. پرتوان), ինչը պահպանվեց նաև հետագա

թագրակ, Ներքին Զուլաքար, Կարմրիկ, Կառնավա:

**7. Գորգի** (վրաց ջօԹճօ-ից, հյր. Գէորգ, արաբ. كوركى ) – Չախձոր (Զաղձոր<Զաղացաձոր), Քարկուլ<sup>68</sup>, Քոթիք (Գողիք), Վաղավեր, Տաճ(ա)րակ, Բանջրուտ, Կամ(ա)րիս, Ուռեկ, Գեսմալի, Կառնավա:

Հանդիպում է նաև **Գորգաս** անունը (արաբ. كوركاس), որը, կարծում ենք, առաջացել է նույն անվան **Գորգ** տարբերակից<sup>69</sup>: Այս անվան կրողներ հանդիպում են Ուղտատափ, Կամ(ա)րիս, Օլոր գյուղերում:

**8. Գրիգոր** (արաբ. -كريكور) Բանակ, Տղածկուրակ, Ագրիթգում<sup>70</sup>, Վերին Սպիտակջուր, Փերթուս (Բերդուս), Ուղտատափ:

Հարկ է նշել, որ «Հարկացուցակում» հիմնականում գրանցված են Գրիգոր անվան ժողովրդա-խոսվածքային տարբերակները.

**ա. Գիրքոր** (արաբ. كريكور) – Բանակ, Գինափոս, Կամ(ա)րիս:

**բ. Գիրքուլ** (արաբ. كريكول) – Փերթուս (Բերդուս), Գոմրաձոր, Գեսմալի, Ուղտատափ, Հավտոց (Հավդոս), Նորբերդ<sup>71</sup>, Կառնավա:

**գ. Գիքոր** (արաբ. كيكور) – Ծաղկոց, Քարկուլ:

**դ. Գիգուլ** (արաբ. كيكول) – Քարգլուխ, Վաղավեր, Կառնավա:

**ե. Գոթոր** (արաբ. كوكور) – Բանակ, Քարկուլ, Բրտանոց<sup>72</sup>, Օլոր:

**9. Դավիթ** (արաբ. داويد, Ս. Զիքիայի վրացերեն ընթերցմամբ՝ տօջած) – Կոձոր, Մուշելի (< Մուշեղ), Մուխրել, Բերդիկ, Քարկուլ, Կամ(ա)րիս, Գեսմալի, Կապ կամ Կապք<sup>73</sup>, Կառնավա: Հանդիպում են նաև նույն անվան տարբերակներով անձինք:

**ա. Դավթիկ** (արաբ. داويك, տարընթերցումը մերն է, Գ. Բ.) – Բանակ, Կարմրիկ:

**բ. Դավթակ՝** (արաբ. داويك, տարընթերցումը մերն է, Գ. Բ.) – Բերդիկ:

Նույն անվան կապակցությամբ հանդիպում են հայկական-օտար երկակի **Դավիթբեկ** (sic!, արաբ. داويد بك, Ուղտատափ, Գևաթ<sup>74</sup>) և **Դավիթ-գյուլ** (Դավիթ+թըք. günl-«վարդ», «ծաղիկ», արաբ. داويد كل, Տղածկուրակ, Կապան, Ուղտատափ, Կառնավա) անձնանունները:

**10. Էփրանոս-Եփրիանոս** (արաբ. ابرانوس) կամ ابرانوس, տարընթերցումը մերն է) – Կոձոր, Քարկուլ, Ներքին Զուլաքար, Փերթուս (Բերդուս, մոտակա

դարերում: Տե՛ս Բնագիր, էջ 374:

68 Արաբ. كارقول: Կոչվել է նաև Քարգետ (արաբ. كاركيد): Ճիշտ է, Ս. Զիքիան երկրորդ տարբերակը որոշակի վերապահումով է ընթերցել: Տե՛ս Բնագիր, էջ 363: Նույնական է Պարտիզաց ջրի ստորին ավազանում գտնվող Քարգլուխ գյուղին (տե՛ս 5-վերստանոց քարտեզ, Դ-8. Каркилух):

69 Տե՛ս Աճառյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 489-492:

70 Արաբ. اكردكوم (տե՛ս Բնագիր, էջ 367): Ս. Զիքիան ընթերցում է Ագիրդգում է Ագիրդգոմ: Տե՛ս Գլխաբանության շրջանագրի ծանոթություններ, էջ 359): XX դարասկզբին՝ Ագիթգոմ (Агитком. Տե՛ս Список, էջ XXXIV): Մեր կարծիքով, գյուղանունը կարելի է կարդալ նաև Աղ(ը)տգոմ:

71 Տե՛ս Բնագիր, էջ 394: Նորբերդ (արաբ. نوربرت: XX դարասկզբին՝ Նորփեթ (Норпет. տե՛ս Список, էջ XXXVII):

72 Տե՛ս Բնագիր, էջ 383. արաբ. ابرانوس, թրք. Pirtanos: Հմնտ. Список, էջ XXXVII. Пирданос):

73 Արաբ. ابرك - Կապ: Տե՛ս Բնագիր, էջ 375: Գյուղի անունը Ս. Զիքիան ընթերցել է Քափի (թաթ) ոչ ճիշտ ձևով: Տե՛ս Գլխաբանության շրջանագրի ծանոթություններ, էջ 377: 2-րդ ձևի համար տե՛ս Բришов, նշվ. աշխ., էջ 28. Капк: Список, էջ XXXVI: Գյուղանվան ճշգրիտ ձևի համար հմնտ. Ժամանակակից ՀՀ Շիրակի մարզի Կապս (< Կապք) գյուղ:

74 Տե՛ս Բնագիր, էջ 376? . دوت بك: Ինչ վերաբերում է վերոհիշյալ բնակավայրին, ապա վերջինիս անունը Ս. Զիքիան կարդում է Գվաղ՝ (արաբ. كواد, վրաց. გვაღო. տե՛ս Գլխաբանության շրջանագրի ծանոթություններ, էջ 368): Մեր կարծիքով այն համապատասխանում է XX դարասկզբի Կիվիթ գյուղին: Տե՛ս Список, էջ XXXVII:

ագարակը), Գեսմալի, Կառնավա:

**ա. Էփրիկ** (արաբ. ايريك, տարրնթերցումը մերն է) – Ուռեկ, Կամ(ա)րիս:

**11. Զատիկ** (արաբ. زاديك)– Սակուռակ՝ (արաբ. سكور), Ագրակ, Բերդիկ, Քյամախս, Վերին Փանասկերտ<sup>75</sup>: Հանդիպում է նաև **Ամիր Զատիկ** անվանաձևը<sup>76</sup> (հմմտ. Ամիր Սարգիս):

**12. Զաքար** (արաբ. ذكر) – Բանակ, Բարիկ, Տղածկուրակ, Բերդիկ, Ուղտատափ, Մեհանք, Օլոր, Կառնավա: Ի դեպ, Բանակի ռաբաթում գրանցվել է անվան **Զաքո** (زاکو) կրճատ ձևը<sup>77</sup>:

**13. Թևաթոր**<sup>78</sup> (հնր. ζορωδόςΘ–**Թեղորոս**–**Աստվածատուր**, արաբ. تودور) – Բանակ, Գուլագիզի ագարակ (Բանակի մոտ), Տղածկուրակ, Գևաթ՝, Ուղտատափ, Մեհանք, Օլոր, Կառնավա: Ենթադրելի է, որ այս անվանաձևը ընդունված էր գերազանցապես քաղկեդոնականների և էթնիկ վրացիների շրջանում: Հանդիպում են նաև անվան «հայացված» հետևյալ տարբերակները.

**ա. Թորոս** (արաբ. تورس)– Արմաշեն, Տղածկուրակ, Քարղուղս, Ագրիթ–գոմ, Ուղտատափ:

**բ. Թորիկ** (<փղքշ. Թորոս, արաբ. تورک) – Բանակ, Ուռեկ:

**14. Խաչատուր** (արաբ. خچاتور) – Բարիկ, Կոձոր, Տղածկուրակ, Ծաթագրակ, Արսենակներ, Լազրվանց, Քոթիք (Գողիք), Գինափոս, Տաճրակ, Գեսմալի, Կամ(ա)րիս: Բանակ բերդավանում, Գուլագիզի ագարակում, Գինափոսում և Օլորում գրանցված է նաև անվան փաղաքշական **Խաչիկ** (արաբ. خچیک կամ چچیک) տարբերակը:

**15. Խոցաղեղ** կամ **Խոցղեղ** (արաբ. خوسه کيان تیغ) – Քարգլուխ, Ուռեկ, Մեհանք, Բրտանոց, Կապք, Կառնավա:

**ա. Խոցիկ** (փղքշ., արաբ. خوسیک կամ خوصک) – Մուխրել, Սակուռակ՝ (մոտակա ագարակը), Քոթիք (Գողիք), Չախձոր, Քարգլուխ, Փանասկերտ բերդավան, Ուղտատափ, Ներքին Ջուլաքար (մոտակա ագարակը)<sup>79</sup>:

**16. Կարապետ** (արաբ. كاره بيد , كاره بيد ناقره بيد) – Բարիկ, Կոթ, Ծաթագրակ, Չախձոր, Քարղուղս՝, Բերդավան, Կապան, Ուղտատափ, Գեսմալի, Բրտանոց, Կամ(ա)րիս, Հավոնոց (Հավոնոս)<sup>80</sup>:

**17. Կիրակոս** (արաբ. كره كوس կամ كركوس երբեմն՝ **Կիրակոզ**) – Արմաշեն, Կոթ, Տղածկուրակ, Արսենակներ, Քոթիք (Գողիք), Քարղուղս՝, Տաճ(ա)րակ, Սողունոն, Փանասկերտ բերդավան, Ուռեկ, Գեսմալի, Կապք, Փերթուս (Բերդուս), Գոմրաձոր, Կառնավա:

75 Սա Հարություն անվան համաթեքն է: Վերջինս, սակայն, չի հանդիպում Բանակի գյուղաշարքում: Առանձին դեպքերում **Զատիկ** անվանաձևն ինքներս ենք վերականգնել (օր. Չախձորում. արաբ. < زاديك : Sten Բնագիր, էջ 347):

76 Տե՛ս Բնագիր, էջ 374. արաբ. امرزاتک (ընթերցումը մերն է – Գ. Բ.):

77 Տե՛ս Բնագիր, էջ 341:

78 Ս. Զիքիան այս անունը կարդում է տջտո՞՞ր – Թևթոր (վրացական ձևով): Ի դեպ, վերջինիս բավական մոտ է միջնադարում հայերի շրջանում հանդիպող **Գ(Թ)ևղոր(ոս)** անվանաձևը: Սակայն հայկական միջավայրում ավելի տարածված էր **Թևաթորոս** կամ **Թևաթրոս (Թևատրոս)** տարբերակները: Տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 296–297: Այժմ էլ Սյունիքի մարզում գործածական է նույն անունից բխող **Թևատրոսյան** ազգանունը:

79 Ավելի մանրամասն տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Բ, Եր., 1944, էջ 547–549: Ի դեպ, անունը հնչել է նաև **Խոստեղ** (տրբբ. **Խուստեղ**), որտեղից՝ **Խոստեղյան** ազգանունը: Տե՛ս **Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 284: 80 Անունը զգալիորեն աղավաղված էր, և Ս. Զիքիան ձեռնպահ է մնացել վերջնական ընթերցումից (տե՛ս Բնագիր, էջ 395): Մենք առաջարկում ենք كره بيد տարբերակը:

Նույն անվանը հանդիպում ենք նաև հայերի միջավայրում բավական տարածված խոսակցական հետևյալ տարբերակներով.

**ա. Կակոս** (արաբ. کاکوس – Կոծոր, Արմաշեն, Մերենիս (<Մայրենիք), Քոթիք (Գողիք), Փանասկերտ բերդավան, Օլոր:

**բ. Կակոն**<sup>81</sup> (արաբ. كاكون), **Կակոճ**<sup>82</sup> (արաբ. كاكوج), **Կուկոս** կամ **Կուկուս** (արաբ. كوكوس, հմմտ. **Կիկոս**)– Բարիկ, Բրտանոց, Գոմրաձոր:

**18. Հակոբ:** Անձնանունը գրանցված է միայն բարբառային հայերենին հատուկ **Ակոփ** ձևով (արաբ. اکوپ) – Բանակ, Բանջրուտ (Փանջրուտ), Ուղտատափ, Կարմրիկ, Գոմրաձոր, Օլոր: Ուշագրավ է **Տեր Ակոփ** (արաբ. دير اکوپ) անունով անձի առկայությունը՝ գրանցված Ծաթագրակում<sup>83</sup>, որն, անկասկած, տեղի հոգևորականն էր:

**19. Հովհաննես:** Այս անձնանունը թերևս առավել հաճախ կրկնվողն է: Ընդ որում, այն հանդիպում է միայն ժողովրդա-խոսակցական հետևյալ տարբերակներով.

**ա. Ավան** կամ **Ավանես** (արաբ. اوان կամ اوانس երբեմն՝ Ավանեզ)<sup>84</sup>– Բանակ, Վարզելի ագարակ, Քարկուլ, Կոծոր, Չախձոր, Իսրայել, Ներքին Զուլաքար, Արսենակներ, Տաճ(ա)րակ, Քոթիք (Գողիք), Ուղտատափ, Միջին Զուլաքար, Կապք, Մեհանք, Սևքար, Օլոր, Կառնավաս:

**բ. Օհանես** կամ **Օխանես (Ուխանես**<sup>85</sup>, արաբ. اوخانس կամ اوخانس) – Կոծոր, Ծաթագրակ, Լազրվանց, Փերթուս (Բերդուս):

**գ. Հանես** կամ **Խանես** (արաբ. هانس կամ خانس)– Իսրայել, Ուռեկ, Նորբերդ: Նույն անունը կրողների շարքում առանձնանում է **Տեր Հանես** (արաբ. دير هانس. Տղածկուրակ), որն, անշուշտ, գյուղի քահանան էր<sup>85</sup>:

**դ. Հոխան** կամ **Օխան** (արաբ. هوخان կամ حوخان, տարընթերցումը մերն է) – Քարգլուխ, Ծաթագրակ, Կամ(ա)րիս:

**ե. Օնես** (արաբ. انس կամ اوناس) – Աղնաքի (Եղնաքի, արաբ. اغناكي), Կոթ:

**զ. Օնիկ** (արաբ. اونيك կամ اونك, տարընթերցումը մերն է) – Տաճարակ, Վերին Փանասկերտ:

**է. Իոհանես < Յոհաննես** (արաբ. ايوانس)– Գողիք (Քոթիք), Բարիկ, Սոդոմոն, Փանասկերտ բերդավան, Վերին Փանասկերտ, Գեսմալի: Հավանաբար այս ձևն տարածված էր առավելապես քաղկեդոնական հայերի շրջանում:

**20. Հովսեփ:** Նախորդի նման, այս անունը ևս հանդիպում է հայերի շրջանում լայնորեն տարածված խոսակցական ձևով՝ **Ուսեփ (Օսեփ**, արաբ. اوسپ): Այս անվան կրողները գրանցված են Բարիկ, Բերդիկ, Մերենիս, Ծաղկոց, Արսենակներ, Քյամխիս բերդավան, Կամ(ա)րիս, Գեսմալի, Հավտոց (Հավդոս), Կառնավաս բնակավայրերում: Հատկանշական է, որ առանձին գյուղերում (օր. Նորբերդում) գրանցված է **Յոսիք** կամ **Յոսեփ** (արաբ. يوسف) ձևը, որը, ենթադրելի է, տարածված էր հայ քաղկեդոնա-

81 Կարծում ենք՝ նույնական է **Կակոնիկ** անվանաձևի հետ: Տե՛ս Աճառյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 576:

82 Այսպիսիպես 1970-ական թթ. հանդիպել ենք նման կաղապարով ձևակերպված **Կարոճ** (<Կարապետ) անվան: Վերջինս կրողին այդպես էին կոչում մտերիմներն ու ընկերները:

83 Տե՛ս Բնագիր, էջ 352:

84 Արաբատառ ձևերը կարելի է ընթերցել նաև բարբառային տարբերակներով՝ **Օվան** և **Օվանես**: Ի դեպ, **Սևքար** գյուղում հանդիպում է **Օվան** անվանաձևը (արաբ. اوان): Տե՛ս Բնագիր, էջ 396:

85 Տե՛ս Բնագիր, էջ 351:

կանների և էթնիկ վրացիների միջավայրում:

**21. Ղազարոս** (արաբ. غزاروس) – Այս անձնանունը, ընդ որում, առանց վերջնական ձգբռնման, Ս. Զիքիան վերականգնել է արաբագիր مزاروس որևէ նշանակություն չունեցող կաղապարով: Ելնելով արաբատառ գրության առանձնահատկություններից, մենք առաջարկում ենք վերը նշված տարրնթերցումը՝ **Ղազարոս** (>**Ղազար**), անուն, որը միջնադարում բավական հաճախ էր հանդիպում հայ բնակչության շրջանում: Այս անունով անձինք գրանցվել են Բանակի մոտակա Գալուզ (<Գալուս) «գիմնիի» ազարակում, ինչպես նաև Բարիկ, Կոձոր, Ծաթագրակ, Կապան, Վերին Սպիտակջուր, Բրտանոց, Օլոր գյուղերում: Անունը բավական հաճախ հանդիպում է նաև վրացական միջավայրում տարածված **Լազար** ձևով, ինչը, մեր կարծիքով հատկապես ընդունված էր քաղկեդոնական հայերի շրջանում [Կամ(ա)րիս, Նորբերդ, Կառնավաս են: Հմմտ. նաև **Լազրվանց** տեղանունը]: Ուշագրավ է, որ հանդիպում է նույն անձնանվան **Կազար** (արաբ. قزار) ուշագրավ տարբերակը: Նման հնչողությամբ անձնանունը լայնորեն տարածված էր մասնավորապես Վասպուրականում: Այս անվանաձևի կրողները գրանցվել են Ուղտատափ, Գեսմալի, Բրտանոց, Կապք բնակավայրերում:

**22. Մարտիրոս** (արաբ. مردروس, երբեմն՝ **Մարտիրոզ**) – Բանակ (մոտակա ազարակ), Լազրվանց, Քարղուղս՝, Սողունոն, –2րդ Բարիկ, Վերին Սպիտակջուր, Գինավիոս, Գեսմալի, Կապք, Օլոր, Լահոր՝ (:<sup>86</sup>لاحر):

**ա. Մատին** (արաբ. ماتين) – Բարիկ:

**բ. Մատիկ** (արաբ. ماتيك) – Բյամխիս բերդավան, Քոթիք (Գողիք), Նորբերդ:

**գ. Մարտիկ՝** (արաբ. مرتك, տարրնթերցումը մերն է)– Մեհանք:

**23. Միհրան** (արաբ. مهران)– Կոձոր, Չախձոր, Քարգլուխ, Ուռեկ, Վերին Փանասկերտ, Միջին Զուլաքար, Նորբերդ, Սևքար, Մեհանք, Կարմրիկ, Օլոր: Արսենակներում հանդիպում է նաև հազվագյուտ **Մեհրևան** կամ **Միհրևան** (<Մեհևան, արաբ. مهران) տարբերակը<sup>87</sup>:

**24. Մելիքսեթ կամ Մելքիս** (–2ն էլ՝ Մելքիսեդեկից, արաբ. ملكسد կամ ملكسن)– Գևաթ՝, Վերին Սպիտակջուր, Կամ(ա)րիս, Ուղտատափ, Հավտոց (Հավդոս), Նորբերդ:

**25. Մինաս** (արաբ. مناس կամ مناص, նաև՝ مناز)– Չախձոր, Աղնաքի (Էղնաքի), Քոթիք (Գողիք), Կապան, Գեսմալի, Կամ(ա)րիս, Օլոր, Հավտոց (Հավդոս), Նորբերդ, Կառնավաս, Լահոր՝:

**26. Միքել** (<**Միքայել**, արաբ. مكيل)– Կոձոր, Չախձոր, Աղնաքի, Ծաթագրակ (մոտակա ազարակը), Արսենակներ, Փանասկերտ բերդավան, Նորբերդ, Կառնավաս: Ուշագրավ է էգեձորում հանդիպող **Մուքել** անվանաձևը (արաբ. موكيل)<sup>88</sup>: Թերևս նույն անվան մեկ այլ տարբերակն է նաև Կառնավասում գրանցված **Ամիքելը** (արաբ. امكيل):

86 Տե՛ս Բնագիր, էջ 401: Գյուղի անունը խիստ աղճատված է: Թերևս կարելի է(՞) վերջինս վերծանել որպես [xjzɛjɬ]– Լավվլջուր:

87 Տե՛ս Բնագիր, էջ 355: Մեհրևանի մասին տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Գ, Եր, 1946, էջ 312:

88 Տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Գ, Եր., 1946, էջ 356:

27. **Մխիթար**<sup>89</sup> (արաբ. مخيتار), որից՝ **Խիթար**<sup>90</sup> (արաբ. خيتار կամ حيدار)– Արմաշեն, Կոթ, Չախձոր, Քյամխիս, Վերին Փանասկերտ, Գեամալի, Օլոր<sup>91</sup>:

28. **Մկրտիչ** (արաբ. مكرديج) . Կոճոր, Մուշեխ, Կոթ, Քարղուղս, Քարկուլ, Բերդավան, Արսենակներ, Լազրվանց, –2րդ Բարիկ, Մկրտչի ազարակ [Տաճ(ա)րակի հարևանությամբ], Փանասկերտ բերդավան, Վերին Փանասկերտ, Ուղտատափ, Բրտանոց, Կառնավաս:

Հանդիպում են նաև նույն անվան ժողովրդա-խոսվածքային հետևյալ տարրերակները.

**ա. Միտիչ** (արաբ. ميديج) – Բանակ, Մուխրել:

**բ. Տիտիչ** (արաբ. تيديج) – Չախձոր:

**գ. Մուկուչ** (արաբ. مكوچ կամ موكوچ) – Բարիկ, Գեամալի:

29. **Սարգիս>Սարքիս** (արաբ. سرقيس, երբեմն՝ **Սարգիզ**) – Կոճոր, Կոթ, Տղածկուրակ, Վերին Սպիտակջուր, Ներքին Ջուլաքար, Մեհանք, Բերդիկ, Քոթիք (Գողիք), Վաղավեր, Բերդավան, Փանասկերտ բերդավան, Ուղտատափ, Կապք, Օլոր:

**ա. Սարուլ**<sup>92</sup> (արաբ. ساكل) – Հավոնց (Հավդոս):

**բ.** Հանդիպում է նաև այս անվան ինքնատիպ **Ամիր Սարգիս** տարրերակը (իննա՝ «իշխան Սարգիս», արաբ. امر سرقيس , նաև امر سرقس)<sup>92</sup>– Խողիկի (Խուդիկի) ազարակ, Բերդավան, Ներքին Ջուլաքար:

30. **Միմոն** (արաբ. سمون կամ سيمون) – Բանակ, Էգեճոր, Չախձոր, Բերդավան, Կոթ, Սողոմոն, Փանասկերտ բերդավան, Ուղտատափ, Բրտանոց, Գառնավաս: –2րդ Բարիկ գյուղում գրանցվել է անվան **Միմավոն** (արաբ. سماون) տարրերակը<sup>93</sup>:

31. **Ստեփան** (արաբ. استپان)<sup>94</sup>– Բանակ, Գալուզի ազարակ, Բարիկ, Արմաշեն, Մուշեխ, Արսենակներ, Մերենիս, Էգեճոր, Քարկուլ, Տաճ(ա)րակ, Գևաթ<sup>95</sup>, Փանասկերտ բերդավան, Վերին Փանասկերտ, Ուռեկ, Ուղտատափ, Գոմրաձոր, Կառնավաս:

**ա. Սեփիկ** (արաբ. سه پک, տարրնթերցումը մերն է) – Բանակ, Օլոր:

32. **Վասիլ կամ Բասիլ** (արաբ. باصل կամ واصل) – Բանակ, Մերենիս, Բանջրոտ, Ուռեկ, Վերին Ջուլաքար, Փանասկերտ բերդավան, Հավոնց (Հավդոս) են: Ինչպես հայտնի է, հայկական միջավայրում ավելի տարածված էր **Բարսեղ** անվանաձևը (հնր. Վասիլիոս, ζοειλίσαΒ): Տայքում տարածված նման անվանաձևերը վիրա-քաղկեդոնական ազդեցության արդյունքն են<sup>95</sup>:

89 Հետևելով արաբատա գրությանը՝ Ս. Ջիբխան, որպես կանոն, անունը սխալմամբ կարդացել է Մուխթար (ծջծոճոճ): Մասնավորապես տե՛ս Զորջոնճճոճն ջոլճոցոճոճն ճոլճոցոճոճն, էջ 343:

90 Տե՛ս Աճառյան, նշվ. աշխ., հատ. Գ, եր, 1946, էջ 366: Քարկուլում հանդիպում է մի անվանաձև, որն առաջարկում ենք կարդալ Խիթարո (արաբ. خيتارو, Խիթար + ո կոչական վերջավորություն): Տե՛ս Բնագիր, էջ 363: Ի դեպ, 2-րդ ձևի համար հանդիպող արաբատա حيدارաղավաղված ձևը բխում է հատուկ անունների (ինչպես անձանունների, այնպես էլ՝ տեղանունների) գրառման օսմանյան թուրքերենի ուղղագրական ոչ հստակ անրագրված կանոններից, որի մասին արդեն նշել ենք:

91 Նույն անունով մեկ անձ հիշատակվում է Գեղվանք ամայի բնակավայրից անմիջապես հետո նշված հարևան գյուղում, որի անունն այնպես է աղավաղված է, որ անհնար է վերջնականապես վերականգնել: Չի կարդացել նաև Ս. Ջիբխան: Տե՛ս Բնագիր, էջ 350:

92 Այս անվանաձևի մասին տե՛ս Աճառյան, նշվ. աշխ., հատ Ա, էջ 136:

93 Տե՛ս Բնագիր, էջ 369: Ընդ որում, կարելի է կարդալ նաև Շմավոն (արաբ. شملون):

94 Արաբատա գրությունը հուշում է, որ անձանունը գրանցվել է ըստ խոսակցական հայերեն **Լստեփան** ձևի:

95 Ի դեպ, հանդիպում է նաև **Բասիլե** բացահայտ վրացական տարրերակը (օր.՝ Խոշվան խառնաբանակ



33. Այս համարի տակ միավորել ենք «վարդ» բաղադրիչով կազմված մի շարք անձնանուններ, որոնք ուշ միջնադարում անգամ շարունակում էին բավական տարածված մնալ հայ բնակչության շրջանում: Նման անձնանուններով անձինք հաճախ են հանդիպում նաև Բանակի լիվա-գավառի այլևայլ բնակավայրերում:

ա. **Վարդան**, խսկց. **Վարթան** (արաբ. وارتان) – Կոթ, Ծաթագրակ, Բերդիկ, Բերդավան, Նորբերդ: Առանձին դեպքերում հանդիպում են անվան **Վարթիկ** (<Վարդիկ, արաբ. وارتیک, Վաղավեր, Չախձոր), **Վարթանես** (<Վարդանես, ավելի ուշ՝ **Վրթանես**, արաբ. وارتانس, Ուռեկ)<sup>96</sup> և **Վարթո** (արաբ. وارتو, Կապք) տարբերակները:

բ. **Վարդերես**>**Վարթերես** (արաբ. وارتارس կամ وارترس, տարընթերցումը մերն է) – Ծաթագրակ, Բանջրուտ:

գ. **Վարդևան** > **Վարթևան** (արաբ. وارتوان) – Կոթ, Բերդավան, Արսենակներ, Կարմրիկ, Մեհանք, Գեսմալի, Վերին Զուլաքար, Հավտոց (Հավդոս):

դ. **Վարդպարոն** > **Վարթպարոն** (արաբ. وارت بارون կամ وارتبارون) – Տղածկուրակ, Բարիկ, Փերթուս (Բերդուս, մոտակա ագարակը), Միջին Զուլաքար<sup>97</sup>:

ե. **Պարոնվարդ**>**Պարոնվարթ** = **Վարդպարոն** (արաբ. بارون وارت) – Բանակ, Ուղտատափ, Գալուզի ագարակ, Գեսմալի, Ներքին Զուլաքար:

զ. **Մարդպարոն**>**Մարթպարոն**՝ (արաբ. مارت بارون, տարընթերցումը մերն է) – Կառնավաա:

Նույն ենթախմբում կարելի է ներառել նաև հազվագյուտ **Վարպետ** (<**Վարդպետ**) անունը, որը գրանցվել է **Սևքար** գյուղում<sup>98</sup>:

Նույն խմբի մեջ միավորել ենք նաև երկակի (հայկական-օտար) ծագումով հետևյալ անունները.

է. **Վարդագիզ**>**Վարթագիզ**<sup>99</sup> (արաբ. وارتازيز, բառացի՝ «սիրելի ծաղիկ<sup>100</sup>») – Ծաթագրակ, Մերենիս, Քարկուլ, Էգեձոր, Կապան, Վերին Փանակերտ, Ուղտատափ, Բրտանոց, Կապք, Հավտոց (Հավդոս), Կառնավաա:

ը. **Ամիրվարթ** <**Ամիրվարդ** (արաբ. امر وارت, «վարդ իշխան»)– Կոձոր, Քոթիք (Գոդիք), Ուղտատափ, Ներքին Զուլաքար:

34. **Տիրատուր** (արաբ. ديراتر կամ ديراتر) – Բարիկ, Տղածկուրակ (մոտակա ագարակը), Չախձոր, Ծաթագրակ, Գեսմալի, Ուղտատափ: Սա **Աստվածատուր** (**Ասվատուր**, տեն վերը) անվան մի տարատեսակն է («Տիրոջ կողմից տրված»): Ուշագրավ է վերոհիշյալ Բարիկում գրանցված **Տիրա-**

գյուղում: Տե՛ս Բնագիր, էջ 401):

96 Տարընթերցումը մերն է (Գ. Բ.): Այս անվան մասին ավելի մանրամասն տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. եր, էջ 128-134:

97 Միջնադարում բավական մեծ տարածում ունեցող այս անձնանունները (27. բ, գ, դ) մեր օրերում պահպանվել են գերազանցապես ազգանուններում (**Վարդերեսյան**, **Վարդևանյան**, **Վարդպարոնյան**):

98 Տե՛ս Բնագիր, էջ 396: Արաբ. وارت (տարընթերցումը մերն է - Գ.Բ.): Տե՛ս նաև «Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ (1621-1640 թթ.)», հատ. Բ, կազմեցին **Վ. Հակոբյան** և **Ա. Հովհաննիսյան**, եր, 1978, էջ 546:

99 Անունը հանդիպում է նաև **Գյուլազիզ** (թրք. Gülaziz) արդեն լրիվ օտար կաղապարով:

100 Թրք. gül բառը (< պրսկ. گُل - „gul” կամ „gol”) նշանակում է և՛ «վարդ», և՛ «ծաղիկ»:

**վոր**<sup>9</sup> (արաբ. دراور կամ ديوار, տարընթերցումը մերն է) անձնանունը<sup>101</sup>, եթե, իհարկե, դա **Տիրատուրի** աղավաղումը չէ:

**35. Քրիստոստուր** < **Քրիստոստուր** կամ **Քրիստոսատուր**<sup>102</sup> (արաբ. كستوسدر կամ كستوسدر, իմա՝ «Քրիստոսի կողմից տրված») – Իմաստային առումով հավասարագոր է **Աստվածատուրին** և **Տիրատուրին**: Այս անվան կրողները հանդիպում են Գալուզի ազարակում (Բանակի մոտ) և Լազրվանց, Կապան, Տաճրակ, Վերին Ջուլաքար գյուղերում: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Տղածկուրակում գրանցված **Քրիստոս** անունը (արաբ. كرسوس)<sup>103</sup>, որը հայերի մոտ ընդհանրապես ընդունված չէր (ի տարբերություն հույների և բալկանյան որոշ ժողովուրդների): Դա թույլ է տալիս պնդելու, որ այն **Քրիստոսատուրի** (խսկց. **Քիստոստուր**) կրճատ ձևն է<sup>104</sup>:

Վերոհիշյալներից բացի՝ «Հարկացուցակում» գրանցված են ևս -100ից ավելի անձնանուններ, որոնք միջնադարում լայն տարածում ունեին և լեզվամտածողության առումով առանձնապես հատուկ էին հայերին: Դրանք թեև նախորդներին զիջում են իրենց կրկնվող հաճախականությամբ, սակայն ուսումնասիրողին հնարավորություն են ընձեռում համապատասխան եզրահանգումներ կատարելու ինչպես մասնավոր անձի ազգությունը, այնպես էլ ընդհանրապես՝ բնակավայրերի ազգային կազմը որոշելիս: Չցանկանալով ավելորդ անգամ ծանրաբեռնել հոդվածը՝ նման անձնանունները ներկայացրել ենք առանձին հավելվածներով: Դրանցից առաջինում (տե՛ս **Հավելված 1**) ընդգրկել ենք այն անձնանունները, որոնք հաճախականությամբ թեև մի փոքր զիջում են մեր կողմից վերոհիշյալ առանձնացվածներին (տե՛ս **Հավելված 1**), սակայն որոնց միջոցով նույնպես հնարավոր է լուսաբանել կրողների ազգային պատկանելությունը: Երկրորդ հավելվածում (տե՛ս **Հավելված 2**) խմբավորել ենք հազվագյուտ կամ «Հարկացուցակում» փոքր հաճախականությամբ՝ ընդամենը 2-1 անգամ, հիշատակված անձնանունները: Վերջիններս մասամբ մեր տարընթերցումներն են, թեև բնավ չենք հավակնում դրանք վերջնական համարել: Ավելացնենք, որ մեր կողմից առանձնացված այս խմբերի հայկական բնույթը որևէ կասկած չի հարուցում, թեև երբեմն նկատելի է վիրա-քաղկեդոնական մշակութային ազդեցությունը:

Բ. խմբի՝ մահմեդական աշխարհին հատուկ, անձանունները, նույնպես մեծաքանակ են և մեր հաշվարկներով գերազանցում են -120ը (խոսքը վերջնական ընթերցվածների մասին է): Դրանց մեծագույն մասն ավանդված է XVI-XVIII դդ. հայերեն հիշատակարաններում, մասամբ՝ նաև մատենագիտության մեջ:

Ստորև ներկայացնում ենք քննվող փաստաթղթում հանդիպող նմանատիպ անուններ, որոնք միավորել ենք 4 ենթախմբերում:

**ա. Հաճախակի կրկնվող մի շարք անվանակերտ բաղադրիչներով**

101 Նույն գյուղում գրանցվել է այս անունը կրող 2 անձ՝ **Վարթպարոնի** որդին և **Խաչատուրի** եղբայրը: Տե՛ս Բնագիր, էջ 344:

102 Մանրամասն տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Ե, էջ 230-232: Այս միջնադարում հանդիպող անունը պահպանվել է **Քրիստոսատուրյան** կամ **Քիստոստուրյան** ազգանվան մեջ:

103 Տե՛ս Բնագիր, էջ 351:

104 Տե՛ս **Աճառյան**, նշվ. աշխ. հատ. Ե, էջ 230: [Ačaryan, op. cit., vol. E, Ye., 1973, p. 230].

## անուններ.

-**ազիզ** (արաբ. عزیز - «փառավոր», «մեծարգո», «սուրբ», «սիրելի»)<sup>105</sup>- Ազիզ, Ազիզբեկ, Ամիրազիզ, Գուլազիզ (Գյուլ-), Խոջազիզ, Յարազիզ, Նորազիզ (Նուր-), Շահազիզ, Շիրազիզ, Ջանազիզ:

-**ալի** (թրք. վերջավորություն)- Միհրալի, Յարալի, Նուրալի(ե), Փիրալի(ե):

-**ամիր** (-միր, արաբ. امير կամ مير - «իշխան») - [Ամիրազիզ]<sup>106</sup>, Ամիրալի, Ամիրբեկ, Ամիրխան, Ամիրնազար, Ամիրջան, Ամիրվաս, Միրալի, Միրալմազ, Միրաք, Միրվալի (Միրվելի), Միրբեկ, Միրիջան:

-**ասլան** (օսմ. թրք. آرسلان - «առյուծ») - Ասլան, Ամիրասլան, Ղարասասլան, Շահասլան, Փիրասլան:

-**բեկ կամ բեզ** (օսմ. թրք. بك , կարդա՝ «բեյ» - «իշխան») - Ազարբեկ, Աթարբեկ, [Ամիրբեկ], Անտոնբեկ, Արսենբեկ, Դուլիբեկ, Դովլաթբեկ, Էլիբեկ (Էլբակ՝), Ղուլիբեկ, Միրբեկ, Պետրբեկ, Ջանիբեկ, Սարիբեկ (Սարուբեկ), Օրդիբեկ (Օրդուբեկ):

-**գուլ** (**գյուլ**, պրսկ. - թրք کۆկամ کۆ - «վարդ», «ծաղիկ»)- Ազատգուլ, Գուլաքի, Գուլազիզ (=Վարթազիզ, տեն վերը), Գուլգաղե, Ղարազուլ, Սարա(հ)գուլ:

-**խան** (թաթար. -պրսկ. خان - «թագավոր», «իշխան») - Ալիխան, [Ամիրխան], Դուրմիշխան, Խոջախան<sup>107</sup>, Մուրադխան:

-**յար** (պրսկ. یار - «բարեկամ», «սիրելի») - Դովլաթյար, Գովիյար, Խուրյար, [Յարազիզ]:

-**նազար** (արաբ. نظر - «հայացք») - [Ամիրնազար], Նազար, Խոջնազար, Փիրնազար:

-**շահ** (պրսկ. شاه - «արքա», «թագավոր») - Մուրադշահ(հ), [Շահազիզ], Շահասլան, Շահբազ, Շահբեկ, Շահդուբադ, Շահդուլի, Շահմելիք, Շահնազար (կրճատ՝ Նազար), Շահում, Շահվելի (Շահվալի), Շահվերդի, Սուլթանշահ(հ):

-**ջան** (պրսկ. «հոգի», «կյանք», փոքր. «սիրելի») - [Ամիրջան], Գորգիջան, Ղուլիջան, [Ջանազիզ], Ջանի (Ջանո), Ջանիբեկ:

-**փիր** (պրսկ. «ծեր», «ծերունի», բայց նաև՝ «սուրբ», «հոգեհայր», «հոգևոր առաջնորդ») - [Փիրալի(ե)], Փիրան, Փիրիջան, Փիրդուզան, Փիրդուլի(ե), [Փիրնազար], Փիրսուլթան:

## **բ. պարսկական (իրանական) ծագումով անուններ - Բեջան, Զոհրաբ (Սոհրաբ, Զուրաբ), Խոջբազ, Խուդաբախ<sup>108</sup>, Խուդիկ կամ Խոդիկ<sup>109</sup>, Ղուրբադ կամ Ղուրաթ, Մեհմանդար, Մեհրաբ (Մերաբ), Յադիգար (Եդի-**

105 Տե՛ս Աբիկյան, նշվ. աշխ., էջ 402: Հմմտ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 59: Ազիզը միաժամանակ նշանակում է «թագավոր» (երկնային) և Ալլահի պատվանուններից մեկն է: Ուստի քրիստոնյաների մոտ առկա այս բաղադրիչը պարունակող անունները թուրք գրագիրները մտածված գրանցել են քերականական սխալով ازیز (ոչ մահմեդականի անվան ճիշտ գրանցումը կդիտվեր սրբապղծություն):

106 Ս-ի մեջ կրկնվող անձնանուններն են:

107 Ս. Զիքիայի կողմից չվերծանված այս անձնանունը կարելի է կարդալ նաև Խոջաջան (արաբ. خوجاجان կամ خوجاجان):

108 Այս անունը, որը պարսկերեն ստուգաբանվում է «Աստծո պարգև», Աստվածատուրի պարսկերեն յուրատեսակ տարբերակն է: Հանդիպում է նաև ձևափոխված Խուդաբաշխ կամ Խուդաբաշ (վերջինից՝ Խուդաբաշյան ազգանունը) տարբերակներով: Մանրամասն տես Աճառյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 552-553:

109 Պարսկա-թուրքական Խուդավերդի (= Աստվածատուր) անվան փաղաքական ձևը:

գար)<sup>110</sup>, Նարինան, Նովրուս (Նովրուզ)<sup>111</sup>, Նուշիրվան, Շադան, Շաքար, Շի(ե)րմազան (կրճատ՝ Մազան), Շիրվան, Ուրմուզ (Հուրմուզ) <Ուրմիզ, Զամշիդ (Զումշուդ), Զանգիր (<Զհանգիր), Ռուստամ, Սալար, Սֆանդիար (>Սպանդար), Փառնավազ, Փարամուզ (Փարեմուզ), Փարսադան, Քալանթար, Քեթխուդա, Օզան:

գ. թյուրք-թաթարական ծագումով անուններ- Ալլահվերդի (թրք. - արաբ. =Աստվածատուր<sup>112</sup>, Ասլամազ, Բահաթուր (<Բահադուր), Բայանդուր (=Բահաթուր)<sup>113</sup>, Դուրալի<sup>114</sup>, Գյուրջի (sic!)<sup>115</sup>, Գոզալ կամ Գյոզալ (հյր. Սիրուն), Դոլմազ, Դուրմիշ կամ Տուրմիշ (հմնտ. Դուրմիշխան), Թեմուր (Թիմուր), Թուման, Ղայթմաս (>Ղայթմազ), Ղարա(ջա), Ղարագոզ<sup>116</sup>, Ղարաիգիթ, Ղորխմազ, Յավրում, Վերդի, Վերմիշ, Քեշիշ=Տերտեր:

դ. արաբական ծագումով անուններ - Աբդալ, Ալադին, Իսբանդար (=Ալեքսանդր), Խոջա, Համզա, Մասուր (Մայսուր)<sup>117</sup>, Մելիք, Մուրադ, Նուրադին, Սուլթան<sup>118</sup>:

Նման անձնանունների թափանցումը հայկական (նաև՝ վրացական) միջավայր սկսվել էր դեռ XI-XII դդ. սելջուկյան և մոնղոլական նվաճումներով: Մակայն դրանք լայն տարածում ստացան հետագա հարյուրամյակներում՝ կապված նորանոր թյուրքախոս էթնիկական խմբերի ներթափանցման հետ: Այս երևույթը պետք է կապել XIII դարի կեսերից օտար մահմեդական երկարատև տիրապետության հաստատմամբ, որի հետևանքք եղան քաղաքական և մշակութային բնագավառներում տեղ գտած բազմաթիվ այլափոխությունները Հայաստանում: Տ. Ավետիսյանն օտարաբանությունների նման առատությունը բացատրում է մահմեդական իշխողներին դիմագրավելու, ինքնությունը պահպանելու և արտաքնապես հարմարվելու ձգտմամբ<sup>119</sup>: Ըստ էության, մահմեդական նվաճողների միջավայրում տարածված անձնանունների ընդունումն ու «յուրացումը» կարելի է համարել որոշակի պաշտպանական հակազդեցության արտահայտություն, ինչը

110 Միջնադարյան ձեռագիր հիշատակարաններում հանդիպում են նաև այս անվան **Նոսիկար**, **Հետկար**, անգամ՝ **Այտիկար** ձևերը: Տես **Աճառյան**, նույն տեղում, էջ 88:

111 Արաբատառ نورو: Տես Բնագիր, էջ 367, 380, 382 ն: Ի դեպ, արաբագիրը կարելի է կարդալ նաև **Նորոս(ց)** կամ **Նուրոս(ց)**: Ուստի չենք բացառում նաև վերջին՝ հայերեն տարբերակը, մասնավորապես ձեռագրերում հանդիպում է մեր առաջարկած ձևին բավական մոտ **Նորես** անձնանունը (տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Գ, էջ 85):

112 Չենք բացառում, որ այս անունը Տայքի բնակիչների կողմից իրականում արտասանվել է **Ալավերդի** (հմնտ. **Ալավերդյան** ազգանունը): Մակայն օսմանցի գրագիրներն անձնանունը գրանցել են ճիշտ ձևով՝ խուսափելով Արաքի անունը աղավաղել:

113 Տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 379:

114 Թյուրքական մեկ այլ հոմանիշ տարբերակն է Դուրսուր: Նույնական է հայկական **Մնացականին**: Տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ 2, էջ 73: Չի բացառվում, սակայն, հայերեն «դուրալի» բառից:

115 Պետք է ենթադրել, որ այս անունը տարածված էր հատկապես քաղկեդոնականների միջավայրում: Այս անձնանունից է առաջացել **Գյուրջյան** (>**Գյուրջին**) ազգանունը:

116 Այս անձնանունը հայերեն ձեռագիր հիշատակարաններում շատ հաճախ հանդիպում է **Ղարակոզ** կամ **Խարակոզ** ձևերով: Տես **Աճառյան**, նշվ. աշխ., էջ 134:

117 Հ. Աճառյանն այս անունը համարում է մաթուր հայկական՝ բխեցնելով «մասուր» բուսանունից (տես նշվ. աշխ., հատ. Գ, էջ 217): Մակայն կարծում ենք, որ այն Մասուր (արաբ. منصور - «հաղթական») անձնանունի մի տարբերակն է: Հմնտ «մողոլ» կամ «մաղալ» < մոնղոլ:

118 Վերոհիշյալ բ., գ., դ. ենթախմբերի համար տե՛ս նաև ա. ենթախմբում նշված բաղադրիչները:

119 Տես **Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 125: Այս կապակցությամբ հեղինակն իրավացիորեն չի ընդունում Հ. Աճառյանի այն կարծիքը, ըստ որի մահմեդական միջավայրի անունները հայերին չեն պարտադրվել, այլ կամովին են ընդունել՝ գիտակցելով վերջիններիս ներքին իմաստն ու «գրավչությունը» ( նույն տեղում, էջ 127): Նույն երևույթը նկատելի է հայկական տեղանունների օտարացումի տեսքով, երբ նախ՝ դրանց գուգահեռ գործածության մեջ են դրվել մահմեդական կամ աղավաղյալ անվանումներ, ապա՝ տեղի է ունեցել վերջիններիս կողմից բնիկ ձևերի աստիճանական դուրս մղումը՝ հաճախ անվերադարձ:

նպատակ ուներ խուսափելու ավելի ծանր հարվածներից և բռնաձնշումներից: Ճիշտ է, նման անունները հաջորդ հարյուրամյակներին գրեթե ամբողջությամբ դուրս մղվեցին շրջանառությունից՝ դառնալով անօգտագործելի, սակայն նույնիսկ մեր օրերում դեռ մասամբ պահպանվել են հայկական ազգանուններում:

Ինչ վերաբերում է գերազանցապես վրացական միջավայրին հատուկ անվանումներին, ապա դրանք իրենց թվով և կրկնվող հաճախականությամբ էապես գիջում են թե՛ ա. և թե՛ բ. խմբերին: Բացի այդ՝ կրկին հիշեցնենք, որ դրանց մի մասը տարածված էր նաև հայերի շրջանում (հատկապես՝ քաղկեդոնական): Ուստի չենք բացառում, որ նշվածների մի մեծ խումբ քաղկեդոնականությանը հարած մեր հայրենակիցներն են եղել: Մասնավորապես դա վերաբերում է «Հարկացուցակում» գրանցված **Գիրգոլ (Գիգոլ)**, **Գորգի**, **Էլիա (=եղիա)**, **Էլիազար** կամ **Լազար (=եղիազար)**, **Բասիլ** կամ **Բասիլե (=Վասիլ)**, **Պավել (Պավլե)**, **Օրդան < Յորդան(ե)**<sup>120</sup> անունները կրող անձանց: Ի դեպ, դրանց մի մասին մենք արդեն անդրադարձել ենք վերևում՝ Ա. խմբի մեջ ընդգրկված հայկական անունները (ազգային-քրիստոնեական և ընդհանուր քրիստոնեական) քննելիս: Այնուամենայնիվ **Աբխալում** (հյր. **Աբխաղոմ**), **Աղտգոմեղ**<sup>121</sup>, **Անրոս** (<**Անբրոսիոս**), **Անդրիա**, **Անուկ(ա)**, **Ավալ**<sup>122</sup>, **Բադուչա**, **Բարթոլոմ** (հյր. **Բարդուղիմեոս**), **Գոգիչա**, **Գոգինա**, **Գոձիա**, **Գոչա**, **Դեմետրե** (տարբերակ՝ **Դեմետրեբեկ**), **Ջազա**, **Ջանդար**, **Ջոսիմ(ա)**, **Էլիազ**, **Էլիսա** (հյր՝ **եղիշե**), **Իգնատ**<sup>123</sup>, **Իլարիոն**, **Իոաննե**, **Ծաթել**<sup>124</sup>, **Մախառեբել (Մախառա)**, **Յակուլ**, **Յատոն**, **Ունանա** (հյր. **Հունան**), **Պետրե(ի)**, **Ջավել**, **Սաբա**, **Տուտիա** (թերևս **Տուտեի** վրացականացված տարբերակը), **Փալասոն** անձնանունները որոշակիորեն ցույց են տալիս նաև էթնիկ վրացիների առկայությունը Բանակի լիվա-գավառի առանձին գյուղերում: Չնոռանանք նշել, որ վերոհիշյալ հիմնականում վրացիներին հատուկ անունները կարելի է հանդիպել հայկական միջավայրում ևս: Ինչ խոսք, դա որոշ դժվարություններ է ստեղծում վարչամիավորի բնակչության էթնիկական կազմը հստակեցնելիս: Այնուամենայնիվ, ուսումնասիրության ընթացքում մենք եկել ենք այն եզրակացության, որ Բանակի լիվա-գավառի **Թախթ** (Բանակի կենտրոնական գավառակ), **تخت**<sup>125</sup>, **Քարաշուք** գյուղերի (վերջին -2ը՝ Փանասկերտի գավառակ) բնակ-

120 Անձնանունն առաջ է եկել Հորդանան (Յորդանան)-ից, որը միջնադարում բավական տարածված էր հայերի շրջանում: Ընդ որում, հանդիպում են նաև **Հորդան (Յորդան)** կամ **Որդան** (կարդա՝ **Օրդան**) անվանաձևերը (տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ Գ, էջ 728-729): Ի դեպ, Օրոս և Սևքար գյուղերում գրանցված է ևս մեկ տարբերակ՝ **Ուրդան** (արաբ. اوردان. տես Բնագիր, էջ 394, 396): Ավելացնենք, որ անունը պահպանվել է **Հորդանյան** և **Օրդանյան** ազգանուններում (տես **Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 290, 315):

121 Անձնանունը կապում են վրացերեն «հարություն» (ჯდგომ - «աղդգոմա») բառի հետ: Սակայն չենք բացառում, որ այն բխում է **Աղտգոմ** տեղանունից, մասավանդ էթե նկատի ունենանք, որ վրացերենում -ցლო վերջածանցը ցույց տալիս տեղացիություն (վրաց.՝ ადგომგლო-«աղտգոմեցի»):

122 Անձնանունը տարածված էր նաև հայկական միջավայրում և պահպանվել է **Ավալյան** ազգանվան մեջ (տես **Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 262): Ընդ որում, իմաստային առումով՝ «առաջին» (<արաբ. 1-ا) անձնանունը նույնական է հայկական **Անդրանիկին** (տես Աճառյան, նշվ. աշխ., հատ Ա, էջ 327):

123 Միջնադարյան Հայաստանում տարածված էր ամբողջական անվանաձևը՝ Իգնատիոս: Տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 378-381:

124 Տես Բնագիր, էջ 371 (արաբ. تخت): Կարծում ենք՝ վրացերեն նշանակում է «ծաթեցի» (հմտ. Ծաթագրակ տեղանունը): Բացի այդ, «ծաթ» բաղադրիչով տեղավարեր կային (և կան) Հայաստանի այլ գավառներում ևս (օր. Ժամանակակից ՀՀ Լոռիի մարզի Ծաթեր գյուղը): Մեր կարծիքով՝ այս անձնանունը հատուկ էր հենց քաղկեդոնական հայերին (ծաթ-հայերին):

125 Տեղանվան ստույգ անվանումը վերջնականապես չի վերծանված:

չությունն ամբողջությամբ կամ հիմնականում կազմված է եղել վրացիներից: Վերջիններս որոշակի թիվ են կազմել **Տղածկուրակ, Արսենակներ, Բերդիկ, Էգեձոր, Փանասկերտ** (բերդավան), **Վերին Փանասկերտ, Ուղտատափ, Վերին Ջուլաքար, Նորբերդ** և մի քանի այլ բնակավայրերում ևս: Կրկնում ենք՝ չի բացառվում, որ «վրացիների» մեջ լինեն նաև քաղկեդոնական հայեր, որոնց անունները հնարավորություն չեն ընձեռում վերջնական եզրահանգման գալ: Սակայն «Հարկացուցակում» առկա, մասնավորապես՝ ագարակ-«չիֆթլիկներին» վերաբերող որոշ տեղեկություններից պարզ է դառնում, որ հստակ տարբերակում է եղել առաքելական և քաղկեդոնական (ուղղափառ) եկեղեցիների հետևորդներին գրանցելիս: Որպես կանոն, առաջինները նշվում են որպես «զիմմի» կամ «զըմմի» (نمی)<sup>126</sup>, իսկ երկրորդները՝ «գյուրջի» (իմա՝ «վրացի»): Այսպես, Բանակի գավառակի ագարակատերերից հիշվում են **Մկրտչի որդի «գյուրջի» Մուրադխանը**<sup>127</sup>, **Տիրատուրի որդի «գյուրջի» Ջաքարը**<sup>128</sup>: Քյամխիսի գավառակում գրանցվել են **Բաշարաթ «գյուրջիի» որդի Խողիկի (Խուդիկ)**<sup>129</sup> և **Աթաբեկ «գյուրջիի» որդի Յարագիզի**<sup>130</sup> ագարակները: **Միհրանի որդի «գյուրջի» Ավանի** ագարակը հաշվառման է վերցված Փանասկերտի գավառակում<sup>131</sup>: Վերոհիշյալ «գյուրջի» – «վրացիների» շարքում առանձնանում է **Օրբեի որդի «գյուրջի» Ջամադը**<sup>132</sup>, ում կարելի է ընդունել որպես էթնիկ վրացի: Ընդհակառակը, «զիմմի» (իմա՝ հայ առաքելական եկեղեցու հետևորդ) են նշվում Բանակի ռաբաթի անմիջական մոտակայքում գտնվող 2 ագարակների հողատերերը՝ **Նուրագիզի որդի Գուլագիզը, Գալուզի որդի Ջանին**<sup>133</sup>: Հիշենք նաև «զիմմիներ» **Բաբայիին** (արաբ. بابای, տարընթերցումը մերն է– Գ.Բ.)<sup>134</sup>, **Միրա(ն)շահի**<sup>135</sup> որդի **Ջուրաբին**<sup>135</sup>, **Տատուրին (Տատոր)**<sup>136</sup>:

Մենք հատուկ նման մանրամասնությամբ անդրադարձանք պատմական Տայքի տարածքում ձևավորված Բանակի լիվա-գավառի անձնանունների լուսաբանման հարցին, որպեսզի հնարավորինս ուժեղ կովաններ ունենանք՝ բացահայտելու վերոհիշյալ վարչամիավորի XVI դ. վերջի ազգային նկարագիրը: **Այս առումով բազմաթիվ փաստեր ուղղակիորեն խոսում են նշված տարածքի համատարած հայաբնակ լինելու օգտին: Ուստի լրիվ անհիմն և ինչ-որ տեղ տարակուսելի է Ս. Զիքիայի այն անպատասխանատու պնդումը՝ իբր Գյուրջիստանի վիլայեթի բնակչությունն «ամբողջությամբ վրացական էր (sic!)», ինչը, մեղմ ասած,**

126 Բառացիորեն նշանակում է «պարտապան», «հարկատու»: Այսպես են կոչվել իսլամական պետությունների, այդ թվում՝ Օսմանյան տերության, ոչ-մահմեդական հպատակները: Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Եր., 1961, էջ 357: Հմմտ. «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 131: Տե՛ս նաև Աբիկյան, էջ 274:

127 Տե՛ս Բնագիր, էջ 348:

128 Տե՛ս Բնագիր, էջ 352:

129 Տե՛ս Բնագիր, էջ 374:

130 Տե՛ս Բնագիր, էջ 377:

131 Տե՛ս Բնագիր, էջ 386:

132 Տե՛ս Բնագիր, էջ 358:

133 Տե՛ս Բնագիր, էջ 342–343: Երկրորդ անձնանունը՝ ըստ մեր տարընթերցման (արաբ. جانی):

134 Տե՛ս Բնագիր, էջ 380:

135 Տե՛ս Բնագիր, էջ 386:

136 Տե՛ս Բնագիր, էջ 400:

**խիստ հեռու է իրականությունից**<sup>137</sup>: Բանակի լիվա-գավառի վերաբերյալ նույն փաստաթղթի տեղեկությունները ճիշտ հակառակն են ապացուցում, թեև, ինչպես բազմիցս նշել ենք, առանձին բնակավայրերում նկատելի է, ընդ որում, երբեմն՝ բավականին ուժեղ կերպով, վիրաքաղկեղոնական կրոնական և մշակութային ազդեցությունը: Սրանով հանդերձ՝ տեղի հայերը որոշակիորեն հայախոս (բարբառախոս) են եղել, ինչը պարզորոշ երևում է օսմանյան գրագիրների կողմից իրենց լսած անձնանունների գրառումներից՝ **Ակոփ, Ավան (Ավանես) կամ Օվան, Ամիրվարթ, Գիքոր կամ Գորոր, Խաչիկ, Կոստան, Խանես կամ Հանես, Մեհատիկ, Սեփիկ, Վարթագիզ, Վարթան, Վարթևան, Վարթիկ, Վարթպարոն կամ Պարոն-վարթ, Տեր-Ակոփ, Տեր-Հանես, Օխան, Օսկետունկ, Օսկևան, Օվակ, Օվանես** ևն, ևն: Ինչպես արդեն նշել ենք, «Գյուրջխտանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակում» ըստ գերդաստանների ավագների բնակչության հաշվառման տվյալները հնարավորություն են ընձեռում որոշակի, թեկուզ՝ մոտավոր, եզրահանգումներ կատարելու Բանակի լիվա-գավառի XVI դ. վերջին բնակչության թվի և ազգային կազմի վերաբերյալ: **Մեր հաշվարկներով, Բանակի, Քյամխիսի և Փանասկերտի գավառակներում (նահիեներ) իսպենջ մուծողների թիվը կազմում էր շուրջ 2000 (1974) տուն-գերդաստան, որից շուրջ 1850-ը կամ 93.7 % -ը հայկական էին (ներառյալ՝ քաղկեղոնական հայերը): Վրացիների (որոշակի վերապահումով) թիվը 124 գերդաստան էր կամ 6,3 %-ը: Տուն-գերդաստանում միջինը 6-7 մարդ հաշվարկելու դեպքում, ենթադրելի է, որ Բանակի լիվա-գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 13000-14000 անձ: Նշենք, որ այս ցուցանիշը հիմնականում համընկնում է Ա. Ակոպովի հաշվարկների հետ՝ 15248 բնակիչ<sup>138</sup>:**

Վիճակագրության տեսանկյունից առկա է ևս մի ուշագրավ երևույթ: Բանակի լիվա-գավառի առանձին բնակավայրերում արդեն բնակություն էին հաստատել որոշակի քանակությամբ մահմեդական ընտանիքներ: Դրանք, ըստ երևույթին, զինվորական-սիփահիներ էին, որոնք ծառայության դիմաց Տայքի տարածքում հողատարածքներ էին ստացել և այստեղ տեղափոխվել ընտանիքներով: Դրանց թիվը 40 էր՝ գրանցված հետևյալ 13 բնակավայրերում.

1. **Բանակի գավառակ**- Բանակի ռաբաթ, داکس (գյուղանունը չի վեր-ծանված), Թախթ, Արսենակներ, Բերդիկ, Գինափոս, Վաղավեր:
2. **Քյամխիսի գավառակ**- Սողոմոն, Բերդավան (Փերթեվան), Կապան, Գևաթ:
3. **Փանասկերտի գավառակ**- Օլոր, Կառնավաս:

137 Տե՛ս Բնագիր, Ներածություն (Предисловие), էջ XV: „Точный, нужно полагать, перечень имен непосредственно ответственных за налоги глав семей населенных пунктов позволяет, по крайней мере приблизительно установить количество местного, являющегося, кстати сказать, целиком грузинским, населения “Вилайета” (ընդգծումը մերն է-Գ. Բ.): Որ անվանի արևելագետի նման պնդումները չեն համապատասխանում իրականությանը, ցույց են տալիս նաև մեր կողմից արդեն նշված Ա. Մելքոնյանի և Ա. Ակոպովի ուսումնասիրությունները:

138 Տե՛ս Ակոպով, նշվ. աշխ., էջ 133:

## Ամփոփիչ եզրակացություններ

1. Բանակի գավառի տեղանունները, չնայած նախորդ հարյուրամյակների պարբերաբար կրկնվող օտար ներխուժումներին և կրոնական-մշակութային ներազդեցություններին՝ XVI դ. վերջին զանգվածաբար պահել էին իրենց բնիկ հայեցի նկարագիրը:

2. Առանձին դեպքերում հանդիպում են վրացական, նաև թյուրքական անվանումներ, ինչը միջէթնիկական փոխազդեցությունների կամ քաղաքական զարգացումների հետևանք է:

3. XVI դ. 2-րդ կեսին հայ բնակչության մի զգալի մասը, պահելով էթնիկ գլխավոր ցուցիչներից մեկը՝ մայրենի լեզուն, հարել էր քաղկեդոնականությանը և հարևան առաքելական դավանանքը հարազատորեն պահպանած հայրենակիցների կողմից արդեն դիտարկվում էր «վրացի» (կոչվել են նաև «ծաթեր»):

4. Սրանով հանդերձ՝ Բանակի գավառը (լիվան) գրեթե միատարր հայաբնակ էր (93.7 %)–ը: Մինչդեռ էթնիկ վրացիներ կարելի է համարել գավառի բնակչության միայն 6.3 %-ին (հաշվարկել ենք ըստ բացահայտ վիրական անձնանունների):

5. Արդեն նկատելի էր մահմեդականների ներթափանցումը պատմական Տայքի տարածք: Այս երևույթը հետագայում ձակատագրական դեր պետք է խաղար տեղի ազգային նկարագրի աղձատման գործում՝ կապված XVII– XVIII դարերում հայ-քաղկեդոնականների («ծաթեր», Տայքում նաև՝ «վրացիներ») զանգվածային մահմեդականացման և թրքախոսության անցնելու հետ:

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ ՑԱԾԻ ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՐԻ ԿՐԿՆՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

#	ԱՆՁՆԱՆՈՒՆ	ԲՆԱԿԱՎԱՅՐ
1	Ազատ	Վերին Սպիտակջուր, Ուղտատափ
2	Ազարիա	Արսենակներ, Ծաթագրակ, Ներքին Ջուլաքար, Գեսմալի
ա.	Ազարիկ, Ազարբեկ	
3	Ալեքսան	Բարիկ, Քարգլուխ, Ծաթագրակ, Օլոր
4	Ահարոն	Բանակ, Արսենակներ, Նորբերդ
5	Անդրեսա (Անդրիաս)	Էգեձոր, Բարիկ, Աղնաքի (Էղնաքի), Արմաշեն
6	Անտոն (Անդոն)	Ուռեկ, Քյամխիս բերդավան, Ուղտատափ
ա.	Անտոնբեկ	
7.	Ավաք < Ավագ	Կոթ, Կամ(ա)րիս, Ուղտատափ
ա.	Ավաքե	
8	Ավետոց՞ (<Ավետիս, արաբ. اويدوس)	Արսենակներ, Բերդիկ, Վերին Ջուլաքար
9	Արտաշեզ (<Արտաշես)	Քարգլուխ, Սակուռակ, Տաճրակ, Բանջրուտ, Գեսմալի, Խոշվան



10	Բաղդասար	Գալուզի ազարակ (Բանակի մոտ), Չախձոր, Վաղավեր, Հավտոց (Հավդոս)
ա.	Բաղիկ (Բատիկ<Բաղդիկ)	
11	Բարիտուն(կ)	Քոթիք (Գողիք), Քարգլուխ
12	Գռուզ (արաբ. كروز, տարրն-թերցումը մերն է) <sup>139</sup>	Բանջրուտ, Նորբերդ
13	Դանել (<Դանիել, արաբ. ادانل)	Տաճ(ա)րակ, Ծաթագրակ, Կամ(ա)րիս, Հավտոց (Հավդոս), Կառնավաս
14	Դողոխ (արաբ. دودخ, հմնտ. Դողոխյան ազգանունը)	Նորբերդ, Կամ(ա)րիս
15	Թաթոս (<Թադէոս)	Տղածկուրակ, Մեհանք
16	Թոռնիկ	Կոթ, Կապան, Կապք, Նորբերդ, Սևքար
17	Թումաս (<Թովմաս)	
ա.	Թումա	Կոձոր, Աղնաքի, Բրտանոց, Քոթիք (Գողիք)
բ.	Տումիկ<Թումիկ(արաբ. دوميك)°	
18	Լևոն	Ազարակ Գևաթի մոտ, Կառնավաս
19	Կոճիկ<Գոճիկ°	Ազարակ Մուշեխի մոտ, Բանջրուտ, Մերենիս, Նորբերդ, Կառնավաս
20	Հազարդեղ (արաբ. هزارتيغ < խակց.՝ Հազարդեղ)	Արսենակներ, Կապք, Քյամխիս բերդավան, Գորգիի ազարակ, Փանասկերտ բերդավան, Կառնավաս
ա.	Հազար	
21	Հազարպետ	2ախձոր, Հավտոց (Հավդոս), Կառնավաս
ա	Ազարպետ	
22	Մաթոս (<Մատթէոս)	Վաղավեր, Քոթիք (Գողիք), Կարմրիկ, Կառնավաս, Խոշվան
ա	Մաթոզ	
23	Մանուկ	Մերենիս, Էզնոխ, Բրտանոց, Հավտոց (Հավդոս)
24	Մանվել	Աղնաքի, Վերին Փանասկերտ, Կառնավաս
25	Մարգար (արաբ. ماركار < խակց.՝ Մարքար)	
ա.	Մարգարե	Կոթ, Փանասկերտ, Գոմրաձոր
26	Մարկոս	Կամ(ա)րիս, Նորբերդ, Վերին Փանասկերտ, Հավտոց (Հավդոս), Կառնավաս
ա.	Մարկոզ	
27	Մոսես	Արսենակներ, Չախձոր, Կամ(ա)րիս, Կառնավաս
ա.	Մոսիկ կամ Մուսիկ	
28	Նորսես<Ներսես	Ծաթագրակ, Լազրվանց, Քոթիք (Գողիք)
29	Ումիկ (Ումեկ) <sup>140</sup>	Կոթ, Կառնավաս

139 Անունը կարելի է կապել բարբառային «գռուզ» – «գանգուր» բառի հետ: Հմնտ. Գոզիկ անունը: Վերջինիս համար տես Աճառյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 518:

140 Հ. Աճառյանն այս անձնանունը կապում է պարսկերեն omid – «հույս» բառի հետ (ինս՝ Հուսիկ): Սակայն մեծանուն հայագետը որոշակի երկմտանքով է հայտնում այդ եզրահանգման վերաբերյալ՝ Ումիկ անունն այնուամենայնիվ համարելով մաքուր հայկական (տես նշվ. աշխ., հատ. Գ, էջ 202-203):

30	Ջոջիկ	Մուշեխ, Կառնավաս
31	Սհակ<Սահակ (արաբ. سهاك)	Արսենակներ, Ուղտատափ, Կամ(ա)րիս, Փանասկերտ բերդավան, داكلس <sup>o</sup>
ա.	Իսակ (<Իսահակ)	
32	Մամսոն	Ուռեկ, Բրտանոց, Սևքար
33	Սոս (արաբ. صوص )	Քյամլիսի բերդավան, Կառնավաս, Գորգիի (Սոսի որդի) ագարակ
34	Վահան	Կապան, Կարմրիկ, Մկրտչի ագարակ
35	Տոնիկ (արաբ. ,تونيک-տարրն-թերցումը մերն է)	Կոճոր, Գևաթ <sup>o</sup> , Կամ(ա)րիս
36	Տուտիկ < Տուտէ (արաբ. توديك)	Ծաթագրակ, Սակուռակ, Մուշեխ
ա.	Տուտեն	
37	Փանոս	Տղածկուրակ, Նորբերդ, Կառնավաս
38	Փիլոպոս <Փիլիպոս (արաբ. فيلپوس)	Չախձոր, Աղնաքի, Ներքին Ջուլաքար, Սևքար, Օլոր
ա.	Փիլիպ	
39	Փիլոս	Տաճրակ, Բանջրուտ, Վերին Փանասկերտ
ա.	Փիլո	

**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԿԱՄ ՀԱԶՎԱԳԵՊ ՀԱՆԴԻՊՈՂ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ<sup>141</sup>**

#	ԱՆՁՆԱՆՈՒՆ	ԲՆԱԿԱՎԱՅԻ
1	Աբգար	Կառնավաս
2	Աթամ<Ադամ	Կոթ
3	Անդրանիկ	Բարիկ
4	Աշոտ	Բանակ
5	Ապետիք <sup>o</sup> (արաբ. ايتيک)	Բարիկ
6	Բարիկ	Ուղտատափ
7	Բարիլուս (արաբ. بارلوس)	Չախձոր
8	Գարսևան	Էգեձոր
9	Գեղեոն	Փանասկերտ բերդավան
10	Գինոս (Քինոս, արաբ. كنوس)	Չախձոր
11	Գովեստ <sup>o</sup> (արաբ. كواست)	Սակուռակ
12	Գուլախպար <sup>o</sup> (արաբ. كل اخبار) <sup>142</sup>	Սակուռակ
13	Ե(է)փրեմ (արաբ. ابريم)	Մեհանք
14	Թանդիլ<Ավթանդիլ, հմմտ. Թանդիլյան ազգանունը	Սևքար

141<sup>o</sup> նշանով ցույց են տրված մեր տարրնթերցումները (Գ. Բ.):

142 Իմա՝ թրք. gül - «վարդ» + հյր. բրբռ. «ախպար» («եղբայր»): Ըստ այդմ՝ Վարդեղբայր:

15	Լիպարիտ (արաբ. لبياردى > لياريد)	Քարգլուխ
16	Խանդիկե <sup>143</sup> , հմնտ. Խանդիկյան ազգանունը <sup>o</sup>	Քոթիք (Գողիք), Տաճ(ա)րակ
17	Խնդում(ե) <sup>144</sup> °	Արսենակներ, Կառնավաս
18	Խոսրով	Մկրտչի ազարակ [Տաճ(ա)րակի մոտ]
19	Ծառուկ (արաբ. زارك)°	Քոթիք (Գողիք)
20	Ծերուն (արաբ. سه رون)°	Արսենակներ, Ներքին Ջուլաքար
21	Կոստան (արաբ. قوسطان)	Բերդիկ
22	Կուզիկ <sup>145</sup> (արաբ. قوزيك)°	Ծաթագրակ
23	Հերապետ<Հայրապետ (արաբ. هراپيد)	Օլոր
24	Մեկիկ	Ծաթագրակ, Քյամխիս բերդավան
25	Մեհատիկ (արաբ. مهاتك)°	Գեսմալի, Սևքար
26	Միրուս >Մուրուս (արաբ. مورس)°	Բրտանոց
27	Նաթան (<Նաթանայել)	Կարմրիկ
28	Նապետ<Նահապետ (արաբ. ناپيد)	Կոթ
29	Նորար<Նորայր (արաբ. نورار կամ "تورهار") - Նորազ <sup>146</sup> (արաբ. نوزاز)°	Մեհանք, Սևքար
30	Շահպարոն	Մեհանք
31	Շահրիկ (հմնտ. Շահրիկյան ազգանունը) <sup>o</sup>	Մերենիս
32	Շանշե (Շանշի)<Շահնշահ <sup>147</sup>	Նորբերդ
33	Ուքանես (արաբ. اوكانس)=Ուքան°	Ուղտատափ
34	Չախալ° (արաբ. چخال)°	Ուղտատափ
35	Պարոնպետ° (արաբ. بارون بد)	Կամ(ա)րիս
36	Պարոնտեր (արաբ. بارونتير)°	Կարմրիկ
37	Պետոսան (արաբ. بيدوان)°	Բարիկ
38	Պետրոս ա. Պետիկ	Բրտանոց, Մեհանք,
39	Պողոս (արաբ. بغوس)	Բրտանոց, Մեհանք

143 Ս. Ջիբիան, որոշակի վերապահումով, ընթերցել է **Խանդակա** (վրաց. ხანდაკა: Տես ցորճոսեճանոս յոլաօյետոս ձոձո ձեցոճոճո, էջ 355): Բնագրում՝ خندقه, ինչը կարծում ենք, ձիշտ կլինի կարդալ վերը նշված ձևով:

144 Ս. Ջիբիան երկու դեպքում էլ ընթերցել է **Խանդանա** (վրաց. ხანდანა: Տես ցորճոսեճանոս յոլաօյետոս ձոձո ձեցոճոճո, էջ 347, 390): Ընդ որում, 2-րդ դեպքում անունը արաբագիր գրանցվել է ځندوم – **Խնդում**: Տես Բնագիր, էջ 399:

145 Չենք բացառում, որ որպես անուն գրանցված է տվյալ անձի մականունը (հմնտ. Կուզիկյան ազգանունը): Սակայն այն կարելի է դիտել նաև թուրքերեն kuzu-«գառ», «գառնուկ» + -իկ նվազական (փաղաքշական) վերջավորությամբ կազմված անձնանուն (իմա՝ Գառնիկ): Ի դեպ, հայտնի է Կուզի արական անունը: Տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 678:

146 Տես **Աճառյան**, նշվ. աշխ., հատ. Դ, էջ 84:

147 Ավելի մանրամասն տես նույն տեղում, էջ 108-112:

40	Ռոմանոս	Կառնավաս
41	Սադուն	Սևաբ
42	Սասուն <sup>148</sup> (արաբ. صاصون)	Կարմրիկ
43	Սիրաբ	Կառնավաս
44	Սիրուն	Արսենակներ
45	Սուքիագ<Սուքիաս <sup>o</sup>	Բանակ, Կառնավաս( <sup>o</sup> ) <sup>149</sup>
46	Վալես<Վաղես (արաբ. ولس, լատին.՝ Valentinus, հմմտ. Վալեսյան ազգանունը) <sup>o</sup>	Բրտանոց
47	Վարագ<Վարագդատ	Սակրուռակ
48	Տերտեր (արաբ. تيردير)	Արմաշեն, Տղածկուրակ
49	Տիրասեր <sup>150</sup> (արաբ. ادراه سير) <sup>o</sup>	Ուռեկ
50	Տոնելիք <sup>o</sup> (արաբ. دونه لك) <sup>o</sup>	Կոձոր
51	Տունկիկ (արաբ. دونكيك) <sup>151</sup> <sup>o</sup>	Բարիկ
52	Ցավ(ա)տար (արաբ. صودار)	Բանակ
53	Օսկետուն(կ)<Ոսկետունկ (արաբ. اوسكيدونك > اوسكيدوك) <sup>152</sup>	Մերենիս, Տաճրակ, Վերին Սալիտակջուր
54	Օսկետուր<Ոսկետուր (արաբ. اوسكيدر) <sup>153</sup>	Վաղավեր, Գինափոս
55	Օսկան<Ոսկան <sup>154</sup>	Քոթիք (Գողիք)
56	Օ(Ու)սկուտ <sup>o</sup> կամ Օսկետո <sup>o</sup> (արաբ. اوسكوت)	Քոթիք (Գողիք)
57	Օվակ<Հովակիմ	Կոթ, Ներքին Զուլաքար

**Գեղամ Մ. Բադայան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի պատմական աշխարհագրությունը և պատմական ժողովրդագրությունը, պատմական քարտեզագրությունը: Հրատարակել է XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանի էթնո-ժողովրդագրական իրավիճակը լուսաբանող մի շարք հոդվածներ, «Վան-Վասպուրական ատլասը» (Երևան, 2015, հայերեն և անգլերեն): Աշխատակցել է «Հայաստանի ազգային ատլաս» (հատոր 2-րդ, Եր., 2008), «Երևան: Պատմաաշխարհագրական ատլաս» (Եր., 2009), «Լեռնային Ղարաբաղի ատլաս» (Եր., 2009) հրատարակություններին: Հեղինակ է Արևմտյան Հայաստանի պատմական աշխարհագրությանը նվիրված մեկ տասնյակից ավելի քարտեզների (Վանի նահանգ, Հաքքարի, Մուշ-

148 Հմտ. նմանատիպ «Սասնայ» անունը, որը բխում է Սասուն գավառանունից: Տե՛ս Աճառյան, նշվ. աշխ., հատ. Դ, էջ 391-392: Մեր կարծիքով, այս անվան գրանցումը պատմական Տայքի տարածքում կապվում է ինչպես այստեղ, այնպես էլ Սասունում IX-XII դդ. կառավարած Թոռնիկյան իշխանական տոհմի հետ:

149 Կառնավասում գրանցվածը՝ վերապահումով (արաբ. سوكرياس)

150 Հունական Θεδραλος («Աստվածասեր») անվան հայերեն հազվագյուտ համարժեքը:

151 Ս. Զիքիան անվերծանելի թողել անունը (արաբ. دو كيك, ընդ որում, առանց ى – ի կետիկների): Տե՛ս Բնագիր, էջ 344:

152 Հմտ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Դ, էջ 191: Արաբ. նաև اوسكيدون: Տե՛ս Բնագիր, էջ 376:

153 Արաբատառ գրությունից էլնելով՝ կարելի է կարդալ նաև Ուսկետուր:

154 Հմտ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Դ, էջ 190:

Տարոն, Սասուն, Հարք-Բզնունիք, Խնուս, Բաբերդ-Սպեր, Դերջան,  
Քղի, Հայոց ձոր, Շատախ ևլն):

## Summary

### THE NATIONAL IMAGE OF CENTRAL AND EASTERN PROVINCES OF TAYK IN THE END OF 16<sup>TH</sup> CENTURY

According to “Spacious List of Taxes of Gyurjistan Vilâyet”

**Key words** – Tayk, Gurjistan vilayet, Sergi Jikia, Banak Nahiyah, Karshim Nahiyah, Liva of Panaskert, toponyms, personal names, indigenous Armenian characteristics, chalcedony, Islam.

G. M. Badalyan (YSU)

A remarkable document from Ottoman period composed in the end of 16th century, which is known as “A Spacious List of Taxes of Gyurjistan Vilâyet” has a great importance for the study the historical demography of Tayk. This unique document was kept in the Eastern manuscripts department of the State Museum of Georgia. The context of the manuscript was published in 1947 by prominent Georgian turkologist Sergi Jikia (a propose, the same author has published the Georgian version of the same document in 1941). Needless to say, that the above mentioned manuscript contains many materials on the historical issues of Armenians and Georgians from this period. As we know, in the second half of 16th century the Ottoman Empire gradually subdued the north-western parts of Armenia and Samtskhe Princedome that contains the south-western parts of Georgia (in Georgian սատաբո- saatabago). In this region has been created the Gyurdjistan Vilâyet. The southern part of the last one contains many districts (with their main centers) of Great Armenia’s Tayk Province, such as Olti-Ughtiq, Mamrvan (Nariman), Kamkhis-Kaghamakhik, Panaskert, Banak (Panak, in Georgian ծան- Bana), which were located in Olti (historical Boghkha) brook’s whole pond of the river Tchorokh. Immediately after the Ottoman conquest, a detailed inventory was made here, such as the registration of the number of residents and the economic situation. “The spacious list of taxes of Gyurjistan Vilâyet” is particularly important because it contains almost all the important statistical information as on populated, as well on depopulated areas of the territory. In fact, in each area are noticed the detailed names of the male gender, which were paying the ispenj (25 akche). In the end of 16th century in the area that we are interested has been existed two liva ( districts) – Banak and Olti, which in turn were divided into nahiyah-cantons. The Banak Liva was consist of three small districts: the formal Banak (in Turkish Nısf-ı Penek), Kamkhis (in Turkish Kâmhis) and Panaskert, which had 109 settlements (14 of which were inhabited and the data are missing about 12 of them). The

examination of names shows that in the above mentioned three districts have been registered 1974 people, which were representing the whole family, and 1850 (93.7 percent) of them were Armenians. In fact, the names often indicate a presence of Orthodox (Chalcedonian, in source “gürcü”, that is – Georgian) Armenians, which is quite a common phenomenon in Tayk and Upper Armenia. “A Spacious List of Taxes of Gyurjistan Vilâyet ” is also valuable in another point: it fully reveals the unitive policy of Ottoman Empire. If in the mentioned period the new created GyurjistanVilâyet’s population was almost consist of Christians (Armenians and Georgians) in 100 percent, and then only two centuries later, most of them were forcibly converted to Islam and lost their national identity.

Резюме

### НАЦИОНАЛЬНЫЙ ОБЛИК ЦЕНТРАЛЬНЫХ И ВОСТОЧНЫХ ПРОВИНЦИЙ ТАЙКА В КОНЦЕ XVI ВЕКА

Согласно «Обширному списку налогов вилайета Гюрджистан»

Гегам М. Бадалян (ЕГУ)

**Ключевые слова** – Тайк, вилайет Гюрджистан, Серги Джикиа, Нахия Банак, Нахия Каршим, лива Панаскерта, топонимы, личные имена, коренная армянская характеристика, халцедонизм, мусульманство.

Для изучения исторической демографии Тайка большое значение имеет интересный документ периода Османской империи, составленный в конце XVI века, который известен как «Обширный список налогов вилайета Гюрджистан». Этот уникальный документ хранился в отделе восточных манускриптов Государственного музея Грузии. Текст рукописи был опубликован в 1947 году выдающимся грузинским тюркологом Сергием Джикией (тот же автор опубликовал грузинскую версию того же документа в 1941 году). Излишне говорить, что вышеупомянутая рукопись содержит много материалов по истории армян и грузин этого периода. Как известно, во второй половине XVI века Османская империя постепенно подчиняла северо-западные части Армении и княжества Самцхе, в который входили юго-западные части Грузии (на грузинском სამთავრო – Саатабаго). В этом регионе был создан вилайет Гюрджистана. В южной части последнего находятся многие районы (с их основными центрами) ашхараТайк Великой Армении, такие как Олти-Ухтик, Мамрван (Нариман), Камхис-Кагамахик, Панаскерт, Банак (Панак, на грузинском языке ზაზა-Бана), которые были расположены у водоема Олти (исторический Богха), ручья реки Чорох. Сразу после османского завоевания здесь была проведена подробная инвентаризация: регистрация количества жителей и экономическая ситуация. «Обширный список налогов вилайета Гюрджистан» содержит важную

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒՄ

17 թվականին, 2017 թվականին, 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017

ՀՀ-ի հանրապետության հանրապետության

статистическую информацию, как о населенных, так и о обезлюдевших территориях. На самом деле в каждой части отмечены подробные имена мужского пола, которые платят испень (25 акче). В конце XVI века в интересующем нас районе существовали две ливы (районы) – Банак и Олти, которые, в свою очередь, были разделены на нахия – кантоны. Банак-Лива состояла из трех небольших районов: формального Банака (на турецком Nisf-ı Penek), Камхиса (на турецком Kâmhîs) и Панаскерта, в котором было 109 поселений (14 были заселены, а о 12 из них данные отсутствуют). Изучение имен показывает, что в вышеупомянутых трех районах было зарегистрировано 1974 человек, которые представляли всю семью, и 1850 (93,7 процента) из них были армянами. Армянские имена часто указывают на присутствие православных (халкидонских, в источниках «gürcü», то есть грузинских) армян, что является довольно распространенным явлением в Тайке и Верхней Армении. «Обширный список налогов вилайета Гюрджистан» также ценен в другом смысле: он полностью раскрывает единую политику Османской империи. Если в упомянутый период новое население вилайета Гюрджистан почти на 100 процентов состояло из христиан (армян и грузин), то лишь через два столетия, большинство из них насильственно приняло ислам и потеряло свою национальную идентичность.